

Մամվել Պ. Մուրադյան
Բանաս. գիյր. դոկտոր

Իմ մայր ազգին թեկուզ ինքս մոր պես ծնած լինեի,
Աստվածային ամբրոսների կաթով սնած լինեի,
Ես լինեի թեկուզ ծնած անմահությունն իմ հայոց,-
Էլի՛ պիտի պարտք մնայի՝ թեկուզ Աստված լինեի...¹:

ՀԱՅՐԵՆԱՊԱՇՏՈՒԹՅԱՆ ՔՈՒՐՄԸ

Հովհաննես Շիրազի ծննդյան 100-ամյակի առիթով*

Բանալի բառեր – Հովհ. Շիրազ, հայ, բանաստեղծություն, պոեմ, Հայաստան, գեղեցկություն, Գանգես, Դանթե, Արարատ, մայր, սեր, գարուն, Եղեռն, Սփյուռք, հատուցում, գալիք:

Մուտք

Ավելի քան կես դար ստեղծագործեց Հովհաննես Շիրազը՝ իր բանաստեղծություններով ու պոեմներով, ձեռքից ձեռք անցնող գրքերով, անտիպ քերթվածներով ու գրեթե ամենօրյա հրապարակային ելույթներով մեծ ներգործություն ունենալով հայ կյանքի և հայ մարդու ազգային նկարագրի վրա: Շիրազը պաշտեց հայրենիքն ու դաստիարակեց հայրենապաշտների սերունդներ, եղավ Սփյուռքի և Մայր հայրենիքի ամենահուսալի կամուրջը, մաքառեց արտագաղթի ու ձերմակ ջարդի դեմ՝ դառնալով հայապահպանության և ազգահավաքի հզոր քարոզիչը:

Հայոց պատմության ու ներկայի գեղարվեստականացմամբ նա հիմնավորեց Հայ Դատի և պահանջատիրության արդարացիությունը, իմաստավորեց ու առարկայացրեց հայության ապագայի երազանքները: «Բիբլիական», «Աստծո գլուխգործոցը», «Հայոց անունները» «Մեր գյուղերի անունները», «Ինքներգանք համամարդկային», «Տիգրան Մեծի վիշտը և հավերժությունը», «Մամիկոնյան սուրբ», «Սիրանամե» և այլ պոեմների, բազմաթեմա ու բազմաժանր քնարական բանաստեղծություններով:

*Հոդվածն ընդունվել է տպագրության 20.09.2014:

1 Շիրազ Հ., Երկեր չորս հատորով, հատ. 1, Եր., «Սովետական գրող» հրատ., 1981, էջ 324: Մույն հրատարակությունից կատարվող հետագա մեջբերումների հատորը և էջերը կնշվեն փակագծերում-Ս. Մ.:

Զ (ԺԲ) քառի, թիվ 3 (47) հուլիս-սեպտեմբեր, 2014
ՎԷՆ համահայկական հանդես

տեղծությունների ողջ ուժով ազգի գիտակցության մեջ ամրապնդեց համայն հայության հայրենիքի՝ Միացյալ Հայաստան գաղափարը, պանծացրեց հայոց լեզուն՝ որպես հայության ազգային ինքնության և հարատևության գլխավոր գրավական, սերունդներին դաստիարակեց ճշմարիտ հայրենասիրության ոգով:

Այժմ՝ նրա ծննդյան 100-ամյակի առիթով, անվարան կարելի է ասել, որ խորհրդային տարիներին ծնված ու մեծացած հայության նոր սերունդների հոգիներում հայոց անկախ և ինքնիշխան պետականության հիմքերը հենց Հովհաննես Շիրազը դրեց: Եղեռնի դատապարտման, արդար հատուցման ու պատմական արդարության վերականգնման իր կարգախոսներով Շիրազը դարձավ 1960-ական թթ. Զարթոնքի սերնդի գաղափարական հայրերից մեկը և միաժամանակ մեծագույն ներդրում ունեցավ 1988 թ. Արցախյան շարժման հասունացման գործում:

1. Այնքան հայտնի և այնքան անհայտ Հովհաննես Շիրազը

Խորհրդային իրականությունը հնարավորություն չտվեց Հովհ. Շիրազին ողջության օրոք տպագրված տեսնել իր բոլոր երկերը, հայրենաշունչ բանաստեղծություններն ու ծավալուն պատմափիլիսոփայական պոեմները: Նույնիսկ տպագրվածները հեղինակից գաղտնի լույս են տեսել հիրավի՝ վայրենի կրճատումներով ու խայտառակ աղավաղումներով, այնպես որ Հովհ. Շիրազի երկերի առաջիկա ակադեմիական լիակատար ժողովածուն հրատարակության պատրաստողները հսկայական ջանքեր պիտի ներդնեն տեքստային տարբերակները բնագրերի հետ ձգգրտելու և ծանոթագրելու համար:

Հովհ. Շիրազին ոչ մի անգամ հնարավորություն չտվեցին մեկնել արտասահման և անձամբ հանդիպել Սփյուռքի տարագիր հայությանը: Ավելին՝ խորհրդային իշխանությունները բանաստեղծի դեմ այնպես էին տրամադրել ոչ միայն իրենց տեղացի հանձնակատարներին, այլև սփյուռքահայ որոշ խորհրդամետ գրողների ու քննադատների, որպեսզի նրանք, Հայաստան գալով, հանդիպեն միայն սփյուռքահայության հետ մշակութային կապերի կոմիտեի աշխատակից գրողներին և Գրողների միության «հավատարիմ» շրջանակի:

Մինչ հարևան Խորհրդային Ադրբեջանում պետականորեն աճեցնում ու փառաբանելով մեծարում էին հայերի հանդեպ մուլեգին ատելության քարոզիչներ Ռասուլ Ռֆային, Անարին, Զիա Բունիաթովին ու Բախտիար Վահաբզադեին, Խորհրդային Հայաստանում հավածում ու պարզապես խեղդում էին Չարենցին ու Բակունցին, Շիրազին ու Սևակին:

Ինչպես ժամանակին Չարենցի, այնպես էլ Հովհ. Շիրազի դեմ Խորհրդային Հայաստանում համախմբվել էր անբարյացակամ անտաղանդների մի համերաշխ ոհմակ, որի գործունեությունը, ցավոք, հիշեցնում էր հանձարեղ Թումանյանի բնորոշած «տաղանդի և անտաղանդության հավիտենական կռիվը»: Թե ինչպես էին խմբագրում և հրատարակում Շիրազին և ինչպիսի մթնոլորտ էր ստեղծված նրա շուրջը, պարզ է դառնում 1961 թ. ՀԿԿ կենտկոմի բյուրոյին կամ նրա ձևակերպմամբ՝ «Հայաստանի գլխավոր ղեկավարության բյուրոյի խորհրդածությանը» խորագրով դիմում-բողոքից, ուր կարդում ենք. «Ինչպես թուրքն է յաթաղանով պաշարել Անին՝ այդպես էլ գրողների միության պաշտոնական ոհմակը, խիստ ու խիստ գաղտնիությամբ, ջանում է հասցնել ինքնասպանության... մահի: Այդ ոհմակի ջանքերով և ձեր միջի «մեծերի» լուռ ծափահարությամբ արդեն յոթ տարի է նոքա ինձնից ոչ մի նոր բան չեն տպել, բացի վերատպումից: Այդ ոհմակի գազանային ձեռքով իմ դեմ գոցված են երկրի բոլոր ու բոլոր թերթերի դմները, արդեն յոթ տարի է դիմացել եմ դժոխային հալածանքներին և գլուխ եմ հանել ինքնասպանության մռայլ վիհանդնդից...

Բայց բաժակը, ահա, լցվում է, և խնդրում եմ՝ ինձ ու ձեզ փրկեք գալիք հավերժական սևաթույր խայտառակությունից. նույնիսկ խեղդված եմ նյութական թաղթաղուկում:...Իմ դեմ այդ ոհմակը գաղափարական կռիվ է մղում. ես Մասիսն եմ, նա՝ ոչ... Մի ժողովում նույնիսկ մեկը բղավեց, թե պետք է Շիրազին ոչնչացնել նաև մարմնապես:

Հովհաննես Շիրազ,-
Համաժողովրդական..... »²:

Հետագայում բանաստեղծը նույնիսկ 17 կետից բաղկացած ելույթի նախագիծ կամ ըստ երևույթին գործունեության ծրագիր էր պատրաստել, թե այդ անհավասար պայքարում կոնկրետ ինչով պիտի զբաղվի, իր ո՞ր երկի տպագրությունը խոչընդոտելու դեմ ինչ ձեռնարկի, թշնամիների և գրչակիցների զրպարտանքներին ինչպես հակադարձի, երկրի ղեկավարներին հանդիպելիս ինչի մասին պիտի խոսի և առաջնահերթ ինչ պիտի անի: Այնպակի որ այդ ծրագրի բոլոր 17 կետերն էլ հետաքրքիր են բանաստեղծի մարդկային ապրումները պատկերացնելու համար, սակայն ուշադրություն ենք հրավիրում միայն մի քանիսի վրա.

«8. Ինձ բոլոր տեղերից զրկելը՝ կիրգիզական, ղազախական, ապա տաջիկական, հետո ուկրաինական, ապա ռուսական գրական շաբաթներից վտարվելս, բոլորը պատմել:

9. Ավելի զազրելին՝ երբ մեռնում է այս կամ այն իմ գրչակիցը – իմ անունը չէին դնում մահախոսականների տակ, որպեսզի ժողովրդի աչքից զցեն:

13. «Հայոց դանթեականը» պոեմիս արգելումը Սո. Վարդանյանի կողմից (Կենտկոմ), Կոմպոզիտորների միության դահլիճում իբր պիտի կատարվեր իմ ծննդյան օրվա նշումը: Աֆիշաները բոլոր պատերից հանվեցին լուսադեմը դեռ չբացված (Էդ. Միրզոյանի ասածները հիշել...):

14. Էրեբունուց էլ զրկեցին ինձ...

15. Նագուշ Հ-ի (Գերագույն սովետի գլխավորի) ինձ բերած ողջույնը Փարիզի 2000 – հայ զանգվածներեն և իմ այցելության մասին խոսակցությունները և նրա երկդիմի պատասխանը:

16. Արցախի (Ղարա) և Նախճրվանի մասին, «Ղարաբաղի ողբը» պոեմիս ճակատագրի մասին.–խոսել մեր արդար դատից»:

Ամենից շատ մտահոգող կետերից մեկը 9-րդն էր, որի վերաբերյալ Շիրազը հաճախ էր արտահայտվում. «Վիրավորական է, անմարդկային: Ինչ պատասխանեմ մարդոց իրավացի դժգոհությանը, թե ինչու իմ անունը այսինչի կամ այնինչի մահախոսականի տակ չկա: Գիտեն, թե ես չեմ ուզե, բայց չգիտեն, որ թաղման կառավարական հանձնաժողով կազմողը ես չեմ, որ անուն ցավակցողների մեջ դնեմ: Կտենվի՛ն՝ ինչպես են ինձ վիրավորում ու մեկուսացնում... Մինչդեռ Պարույրի մահով ինձնից շատ վշտացած ու ողբացող մեկը չկա»³:

Բանաստեղծի նկատմամբ վերաբերմունքը նույնն էր մամուլի պետական կոմիտեում և պետհրատում: Իրենց կոմունիստ երևակայող ղեկավարներ կային, որ ազատամտությունն ու բանաստեղծներին և մանավանդ Հովհ. Շիրազին հալածում էին մարքսիզմ-լենինիզմի դրոշմով: Այդպիսի ղեկավարներ ոչ Բաքուն ուներ, ոչ Մոսկվան, ոչ էլ միութենական մյուս հանրապետությունները: Ազգային գրական ու գիտական արժեքների, այդ թվում և Հովհ. Շիրազի ստեղծագործությունների ճակատագիրը նրանք էին վճռում: Իհարկե, կային նաև այնպիսիները, որոնք դժվարությամբ էին համատեղում ազգային մտածողությամբ հայ մարդուն և խորհրդային կոմունիստ պաշտոնյային, բայց, ի վերջո, նրանք էլ ենթարկվում էին վերին հրահանգներին:

2 «Համաժողովրդական» հասկացությունն ինքնաբնութագիր է: Նամակը պահվում է բանաստեղծի ժառանգների մոտ – Ս. Մ.:

3 Շիրազյան այս ծրագիր-նախագիծը կազմվել է 1968 թ. հոկտեմբերին տեղի ունեցած Էրեբունի-Երևանի 2750-ամյակի տոնակատարությունից և Պ. Սևակի եղբրական մահից՝ 1971 թ. հետո: Պահվում է Շիրազի ժառանգների մոտ –Ս. Մ.:

Եթե ոմանք ինքնարդարացման կամ հետին թվով բարեկամ ձևանայու մարմնաջով (իսկ այդպիսիք բավական շատ կան այսօրվա թոշակառուների մեջ) նույնիսկ փորձեն հերքել կամ կասկածի մատնել այս ամենը, ապա ասվածը հաստատող բազմաթիվ պահպանված վավերագրեր կան, որոնք կարող են պատկերացում տալ բանաստեղծի շուրջ ձևավորված մթնոլորտի մասին: Բանը հասել էր նրան, որ Հովհ. Շիրազին խմբագրում կամ հրատարակում էին հեղինակից գաղտնի, լավագույն դեպքում վերատպում էին արդեն հայտնի ստեղծագործությունները և հայտարարում, թե «Շիրազն իրեն սպառել է, այլևս նոր գործեր չի գրում և զբաղված է ինքնակրկնությամբ»: Մինչդեռ պարզվում է, որ 1972 թ. պետական պլանից հանել են նրա բոլոր գործերը, 1974 թ. արդեն շարված և էջկապած «Քնար Հայաստանի» երրորդ գրքից, անխնա կրճատումներից բացի, հանել են շուրջ 100 բանաստեղծություններ և ծախսն էլ բռնագանձել հեղինակից: Ողջամիտ ընթերցողին ենք ներկայացնում մեկ այլ վավերագիր.

«Կենտկոմի գլխավոր ղեկավարին

Դիմում– բողոք

Ահա այն բանաստեղծություններս, որոնք իբրև փշոտ ծաղիկներ՝ հանվել են գրքիցս. – եթե այս անփուշ իմ վարդերը չկարգադրեք վերադնել գրքիս մեջ,– ես էլի կբողոքեմ՝ ձեզնից էլ բարձր բարձունքի՝ խղճի առջև դնելով սույն այս իմ հայրենապաշտի երգերս: –Առանց սրանց ես գիրք չեմ տա աշխարհին:

Հ. Շիրազ (ստորագրություն)

Հ. Գ. Բանաստեղծություններս հանված են գաղտնի կերպով խմբագրի և պետհրատի կողմից, բայց բռնեցի...»:

Նույն իրավիճակը շարունակվել է և հետագայում. 1977 թ. Պետհրատի գլխավոր խմբագիրը Հովհ. Շիրազի խմբագրվող գրքի անվանաթերթին արել է հետևյալ մակագրությունը.

«Ընկ. Լ. Արագյանին

Խնդրում եմ խմբագրել, բայց հեղինակից ... գաղտնի:

Ծավալը՝ 15, 0 մ.

10. 05. 77 Ստորագրություն»:

Հատկապես Հովհ. Շիրազի հանդեպ գործադրվում էր հետևյալ քաղաքականությունը. «Վերինները հրամայում էին՝ խմբագրելիս կրճատել այնպես, որ Շիրազը չհամաձայնի և գործը հետ վերցնի», հետո էլ արդարանում էին՝ տարել է, հետ չի բերում, որ տպենք. համոզեք թող բերի...»

Պաշտոնագրկվելուց վախեցած ոչ անհայտ մի գրող, որ Պետհրատի գեղարվեստական գրականության բաժնի վարիչն էր, իբր՝ խմբագրել էր «Անի» պատմափիլիսոփայական պոեմը՝ կրճատել–հանելով այնքան էջեր, որքան ինքը ամբողջ կյանքում չէր էլ գրել: Բարեբախտաբար պահպանվել են այդ էջերի վրա դառնացած հեղինակի մի քանի մակագրությունները. «Ինչո՞ւ հանես, այ՛ հանվելի», «Ով ջնջել է, ինքը ջնջվի», իսկ խմբագրի **հանել** բառի վրա Շիրազը հարցական է դրել ու կողքը պատասխան գրել՝ «հանել – անջր»:

«Հայոց դանթեականը» պոեմի տիտղոսաթերթի վրա նույն պաշտոնը զբաղեցրած մեկ ուրիշ, ամենևին էլ ոչ անտաղանդ գրող մակագրել ու ստորագրել էր. «Հակասովետական հոլովանք է»: Մի ոմն «Փարձրաձաշակ» ու «առավել հավատարիմ» զգուշավոր պաշտոնյայի քմահաճույքով հանել և «կորցրել» էին «Հայոց դանթեականը» պոեմի բոլոր 21 գլուխների արձակ առաջաբանները: Կենտկոմի քարտուղար Կարեն Դեմիրձյանը, որ նախապես ծանոթ էր պոեմի բնագրին, գարնացել էր, գայրացել ու կարգադրել էր վերականգնել պոեմի այդ արժեքավոր մասերը: Հեղինակն էլ չէր գտնում, ուստի վստահեց տողերիս գրողին. հիշողությամբ վերականգնեցինք ու երբ համեմատեցինք Շիրազի ձեռագրերի լաբիրինթոսից հայտնաբերված մի տարբերակի հետ, պարզվեց՝ ընդամենը մի քանի բառի հոմանշային տարբերություն կար: Շնորհավորեցինք հեղինակին պոեմի տպա-

գրությանը խանգարող արգելքների չեզոքացման համար, սակայն նա դրանից չուրախացավ. «Կենտկոմի գլխավոր Դեմիրճյանն էլ չկարողացավ օգնել,- մի օր ինձ խոստովանեց դառնացած Շիրազը: -Բայց հասկացել եմ մի բան. դեմ չեն պոռնիս տպելուն, հո չե՛ն ասում՝ չենք տպելու, սակայն դիտմամբ պիտի ձգձգեն մինչև մեռնեմ, որ դրանից հետո պոռնիս ինչպես իրենք ուզեն՝ այնպես տպեն»:

Այդպես էլ եղավ:

Այս էր Խորհրդային Հայաստանում տիրող գրական բարքերի և այն մթնոլորտի իրական պատկերը, ուր հատկապես Հովի. Շիրազի ձեռագրերը ենթակա էին վավերացման և չարամիտ պաշտոնյաների աղետին:

Սրանից երևում է, որ մենք ցայսօր ամբողջությամբ չգիտենք մեր սիրելի բանաստեղծի իրոք վիթխարի գրական ժառանգությունը, որի էջերում առատորեն սփռված են հայության անցյալի, ներկայի, առավել ևս ապագայի համար կենսականորեն կարևոր խորհուրդները: **Մինչև օրս մենք գնահատել ենք մեր իմացած, մեր ձանաչած Հովի. Շիրազին: Բայց իրական Շիրազը անհամեմատ մեծ է մեր իմացածից թե՛ իր գրական վաստակով, թե՛ մարդկային նկարագրով: Հովի. Շիրազի 100-ամյա հոբելյանը լավագույն հնարավորությունն է նրա գեղարվեստական մեծ աշխարհի հետ շփվելու, ստեղծագործությունը ըստ կարելվույն անխաթար հրատարակելու, գնահատելու և արժևորելու համար:**

2. Բանաստեղծի ծննդյան ժամանակը

1965 թվականին՝ Մեծ եղեռնի 50-ամյակի հետ կապված ապրիլքսանչորայան հայտնի դեպքերից հետո, Հովի. Շիրազը հատուկ կամարտահայտությամբ հայտարարեց, որ ինքը ծնվել է հենց 1915 թ. ապրիլի 27-ին՝ Մեծ եղեռնի դժնդակ օրերին, Կարսից Գյումրի գաղթի ճանապարհին⁴: Իր այս որոշումը նա հիմնավորել է նաև բանաստեղծությամբ.

**Ես ծնվել եմ ձորերում՝
Եղեռնի սև օրերում (1, 8):**

Ընդգծելով կարսեցի Աստղիկ մոր և գյումրեցի հմուտ հողագործ Թադևոս հոր մեղմ ու բարի բնավորությունը՝ նա ջանացել է հաստատել ծննդյան այդ թվականը, նկատելով, որ իր ծնունդը ոմանք նպատակադրված հեռացնում են Հայոց մեծ եղեռնի տարեթվից, ինչպես որ մեկուսացրին և թույլ չտվին, որ անձամբ մասնակցի 1965 թ. Եղեռնի 50-ամյակի առթիվ կազմակերպված համաժողովրդական միջոցառմանը: Բոլորին կարելի էր, նրան՝ ոչ...

«Ահա այս երկու մեղմություններն (Թադևոս հայրն ու Աստղիկ մայրը-Ս. Մ.) ինձ աշխարհ են բերել, որպես իրենց սիրո երրորդ պտուղը, **հազար ինը հարյուր տասնհինգ թվականին** Գյումրի նվիրական քաղաքում»⁵ (ընդգծ. մերն է-Ս. Մ.),- հետագայում «Մի փետուր իմ արծիվ կյանքից» հուշագրության մեջ գրել է բանաստեղծը՝ նպատակ ունենալով հաստատել իր ծննդյան տարեթիվը: Սակայն երկու տարեթիվերն էլ՝ և՛ 1914 թ. ապրիլի 26-ը, և՛ 1915 թ. ապրիլի 27-ը, վերաբերում են Հովիհաննես (Օսնիկ) Կարապետյան մարդուն: Իսկ այդ թվերը, որոշակի թե

4 Խնդիրը առավել հանգամանորեն հնարավոր է քննել Հովի. Շիրազի գիտական կենսագրության մեջ, որը պետք է շարադրվի վավերագրերի և ժամանակակիցների վկայությունների մանրակրկիտ ուսումնասիրությամբ ու փաստերի համադրմամբ: Մենք անդրադառնալու ենք Հ. Շիրազի կենսագրության այն դրվագներին, որոնք կարևոր ենք համարում նրա՝ որպես բանաստեղծի, ձևավորման, ստեղծագործական ուղու, գրական մտածողության ընթացքի, նախորդների ու ժամանակակիցների հետ ունեցած հարաբերությունների և ժամանակի գրական կյանքում խաղացած դերի բնութագրման տեսանկյունից - Ս. Մ.:

5 Հ. Շիրազ, Մի փետուր իմ արծիվ կյանքից, «Հայաստան» հրատ., Եր., 1984, էջ 7:

ՀԱՎԵԼՎԱԾ

2 (ՃԲ) քառի, թիվ 3 (47) հուլիս-սեպտեմբեր, 2014

ՎԷՆ համահայկական համբեր

կասկածելի լինելով հանդերձ, մեզ համար գրեթե նույնքան կարևորություն ունեն, որքան Նարեկացու, Քուչակի, Սայաթ-Նովայի կամ Աբովյանի համար մատնանշվող ծննդյան տարբեր տարեթվերը: Բանաստեղծներ էլ կան, որոնց ծննդյան տարեթիվն առհասարակ հայտնի չէ, բայց նրանց ստեղծագործությամբ են բնորոշվում իրենց ապրած դարն ու ժամանակը: Ուրեմն՝ կարևորն այս դեպքում ոչ թե մարդու ծննդյան տարեթիվը, ամիսը, օրն ու ժամն են, այլ **բանաստեղծի ծննդյան ժամանակը:**

Ահա թե ինչու էր Հովհ. Շիրազը փոխել իր ծննդյան ընդունված տարեթիվը և կապել Հայոց մեծ եղեռնի իրողության հետ: 1920 թ. աշնանը թուրքական արշավանքի ժամանակ հազարավոր հայերի հետ Գյումրիում սպանվեց նաև բանաստեղծի հայրը՝ ազնիվ հողագործ Թադևոսը, և փոքրիկ Հովհաննեսի՝ Խուժան Օվոյի համար այդ ժամանակից սկսվեց ծայրահեղ աղքատության ու որբության դառը փորձություններով լի մի շրջան: Վաղ մանկության տարիների նրա առաջին բանաստեղծական թողածանքները լսել ու քաջալերել են Աստղիկ մայրիկը, նույնիսկ 1920 թ. զոհված Թադևոս հայրիկը, Գոհար և Մանիկ քույրերը, որոնց հանդեպ առապելական սեր ուներ բանաստեղծը, որբանոցային խուժանացած ընկերները, շուկայի առևտրականներն ու արհեստավորները, Գյումրիում կենտրոնացած մտավորականները, դժվար ապրող վշտահար, բայց սրտաբաց մարդիկ: Բնորոշ է հոր մասին հեղինակային հետևյալ մանկական վերիուշը, որի մեջ երևում է նաև մանուկ բանաստեղծն ինքը.

-Ինքն իրենից Օսիկս ոտանավոր կհանե...

Կավից մարդ էլ կշինե,- պարծենում էր հայրիկս:

-Ասա ինքը մարդ դառնա,- կատակում էր մայրիկս:

-Չէ՛, կդառնա. չեն տեսնում՝ մատներն հույս են ի ծնե... (4, 234):

Բարեմիտ ու չարամիտ հարևաններն էլ իրենց խորհրդավոր վերաբերմունքն ունեին.

-Քիթը սրբել չի կրնա՝ ինչեր կենե՛ հըլա տես... (4, 234):

«Խուժանի որբանոցից քիչ հուշեր ունեմ,- խոստովանել է բանաստեղծը,- հիշում եմ, թե ինչպես մանուկ մատներով դումուղազ կավից շինում էի գառ, հովիվ, ուլ, ձի, կով, գութան ու նույնիսկ գյուղ և իմ այդ «ստեղծագործությունների» «հնայքով» սիրվում էի որբանոցի ղեկավարների կողմից՝ ինչպես, օրինակ, **վաթսունամյա օրհորդ Սաթենիկից, որը վայրագորեն ծեծում էր իմ ընկեր-որբուկներից շատերին, իսկ ինձ միշտ քաջալերում էր՝ գլուխս շոյելով**, թեև ես միշտ էլ «մեղքի» մեջ էի լինում»⁶ (ընդգծ.մերն է-Ս. Մ.): Այս տպավորություններից են հյուսվել բանաստեղծի ու իր սերնդակիցների մանկությունը պատկերող գրեթե բոլոր ստեղծագործություններն ու «Իմ ընկեր Լորիկը» պոեմը, շիրագյան արձակի որոշ էջեր:

Արդեն 1929-1930 թթ. նրա գործերը ոչ միայն լույս էին տեսնում պատի թերթերում ու ավանախներում, այլև տպագրվում էին տեքստիլ գործարանի «Մանածագործ» ու քաղաքային «Բանվոր» թերթերում: Հրձվանքով էր հիշում, թե ինչպես «Մանածագործի» ցրիչ եղած ժամանակ մի անգամ հենց ծանապարհին հանել էր տպարան տարվող նյութերից մեկն ու նրա տեղը դրել իր բանաստեղծությունը: «Հանցագործն» այս անգամ չէր պատժվել, քանի որ բոլորն անվերապահ հավանել էին այդ բանաստեղծությունը: Ապագա բանաստեղծի կյանքի այս դժվար շրջափուլի մասին, կարծում ենք, ուրիշների բնորոշումներից առավել արժանահավատ վկայություն է հենց սեփական խոստովանությունը. «... Եվ ձգտեցի արհեստ սովորել, կանգնում էի հյուսնի, դարբնի, կոշկակարի խանութի դռներին և հայիլ-մայիլ նայում էի, որ...մարդ դառնամ: Եվ քանի՛-քանի՛ անգամ

6 Նույն տեղում:

աշակերտեցի դարբնին, հյուսնին, կոշկակարին, պղնձագործին, դերձակին, բայց ամենքի մոտ ինձ չգտա, անդուլ ձանձրանում էի... Եվ, չգիտեմ ինչպես, դրսում՝ պատերի տակ, սկսեցի կոշիկ կարկատելով գլուխս պահել, բայց սա էլ ես չէի... Ապա հին ու մին էի հավաքում, ծախում, հին կոշիկներ, պղնձի, երկաթի կտորներ, բայց սա էլ երազներիս ետևից չհասավ...սա էլ ես չէի: Մայրս տարավ տվեց ջուլիակի աշակերտ. ջղերի խելահեղություն ստացա և մի օր կտրտեցի կտավի հենքաթելերը, ինձ տարան, հետո բաց թողեցին,- ջուլիակն էլ ես չէի, մտա խմբագրատուն...ցրիչ, այդ էլ ես չէի...**Փախա, որ ինձ գտնեմ, և կարծես... այս գրքերում էլ ման եմ գալիս, հույս աստված... »**⁷ (ընդգծ. մերն է - Ս. Մ.):

Լավ թե վատ կողմերով՝ նրան գրեթե բոլորն էին ձանաչում, բայց խոստում-նալից պատանուն հատկապես սիրում էր արդեն ծերունի Ատրպետը՝ հանրահայտ «Տժվժիկ» նորավեպի հեղինակը: «Գիտեր, որ քաղցած եմ մնում, և հպարտ արժանապատվությունս թույլ չի տալիս ուրիշից խնդրել,- պատմում էր բանաստեղծը: -Որպեսզի ես չվիրավորվեմ՝ մշակել էր ինձ կերակրելու, սովից փրկելու հարմար եղանակ: Եթե անձամբ էլ ինձ չտեսներ, ընկերներիս միջոցով կկանչեր իր մոտ, կտաներ շուկա, կառներ մի տոպրակ քամած մածուն, կտար ձեռքս ու կլննդեր:

-Օննիկ ջան, էս մածունը տանիս մեր տուն:

-Տանում էի, երբեմն պատմում էր բանաստեղծը գրական հանդիպումներում,- ձանապարհին գայթակղությանը չէի դիմանում, ուտում էի մածնի վրայից, կիսատ տոպրակը տուն հասցնում: Ու թեև Ատրպետը քաջ գիտեր, որ ես ձանապարհին մածունի տոպրակը «թեթևացնում» եմ, հաջորդ օրը նորից էր կանչում.

-Էս մածունը տանիս մեր տուն...»:

Մի կարճ ժամանակ՝ դպրոցն ավարտելուց հետո, 1933 թ., ուսուցչություն է անում մոտակա Հաջինագար (հետագայում Կամո՝ Ախուրյանի շրջանում) գյուղում: Պարզվեց, որ դասերին աշակերտներին ինքնուրույն աշխատանք կատարելու հանձնարարություններ է տվել, իսկ ինքը՝ բանաստեղծություններ գրել: Բանաստեղծական ազատության վարժված Օննիկը չէր կարող կաշկանդվել դպրոցական կարգուկանոնի շրջանակներում. նա շուտով նորից հայտնվում է քաղաքում՝ որբանոցային ընկերների ու գրական մարդկանց շրջապատում: Զուլիակի աշակերտի «պաշտոնով» աշխատում է տեքստիլ գործարանում, թղթակցում մամուլին, եռանդով մասնակցում տեքստիլի և երկաթուղայինների գրական տարբեր խմբակների աշխատանքներին: Ծագում է գրական անվան խնդիրը. Կարապետյան ազգանունը բանաստեղծական չէր, և դյուրին չէր հարմար անվան ընտրությունը. Հովհաննես Պետյան, Հովհաննես Կարապ, Հովհաննես Շիրակ, Հովհաննես Շիրակացի... սրանցից յուրաքանչյուրն ուներ իր անհարմարությունը՝ հիմնականում կապված այդ անուններով անտաղանդ ինքնուսուցիչների հետ, որոնք «Անունս հրնչի ես գողցե» սպառնալիքով ու ծեծուցարդով հարկադրում են պատանուն հրաժարվել այդ անուններից: Բանաստեղծի բնատուր ձիրքը գնահատող Ատրպետն է միջամտում: Հենց նա էլ, պատանու բանաստեղծություններից ու «Սիամանթո և Խջեզարե» պոեմից, Արևելքի մեծ բանաստեղծներ Հաֆեզի ու Սաադիի ծննդավայրի՝ Իրանի Շիրազ հոջակավոր քաղաքի վարդերի բույրն առնելով, իր ձեռքով **Շիրակ** անվան **կ** -ն **զ** է դարձնում՝ այդպես ձևավորելով բանաստեղծի **Շիրազ** գրական անունը, որով նա արժանացավ համընդհանուր ճանաչման:

Իր անվան շուրջ վեճերի լավագույն բացատրությունը տվել է բանաստեղծն ինքը 1954 թ. ՀԽՍՀ Մարտունու շրջանի Ձորագյուղի դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցիչ, ժողովրդական երգիչ ու երգահան Հայրիկ Ղազարյանին գրած նամակում, որով էլ սկսվել է նրանց տևական բարեկամությունը: Հ. Ղազարյանն էլ չափածո նամակով մյուսների նման հարցրել է, թե ինչու «Մարդկանց անունները» պոեմի հեղինակի անունը **Շիրազ** է և ոչ թե **Շիրակ**: Բարեբախտաբար

7 Հ. Շիրազ, Երկեր, հ. 4, էջ 234:

պահպանվել է Հովհ. Շիրազի պատասխան նամակը. «Սիրելի անծանոթ ընկ. Հայրիկ Ղազարյան, ստացա ոտանավորով գրված Ձեր ողջույնի նամակը իմ «Մարդկանց անունները» պոեմի մասին: Շատ ու շատ շնորհակալություն Ձեր տաք վերաբերմունքի համար: Ձեր այդ բարձր գնահատականն ինձ՝ իբրև **ժողովրդի ինքնարնտրյալ ծառայի**, պարտավորեցնում է:

Իսկ թե ինչու իմ անունը **Շիրակ** չէ, այլ Շիրազ է, դա, կարծում եմ, համազգային հարց չէ: Իմ անունը գրող Ատրպետն է կնքել ու նշանակում է **Շիր՝ առյուծ, ազ՝ առյուծի բերան**: Նա ինձ այդպես կնքեց շատ վաղուց, երբ կարդաց իմ «Միամանթոն և Խջեզարե» պոեմի ձեռագիրը և ասաց. «**Սերը ահա այսպես պիտի գրեն. առյուծի բերանով լացած վիշտ է՝ առյուծի բերանով, սոխակի լեզվով: Ահա իմ անվան ծագումը**»:

Բարևներով՝ **Հովհաննես Առյուծաբերան**:

15.04. 1954, Երևան»⁸ (ընդգծ. մերն է- Ս. Մ.):

Մրցակիցներն իրենց ողջության օրոք որպես բանաստեղծ այդպես էլ չկայացան ու անհետացան, սակայն գրական արևմտաօտերում, «Մանածագործ», «Լեռնագործ» ու «Բանվոր» թերթերում, ապա և «Գրական թերթում» սկսեցին հաճախակի երևալ ժամանակի համար անսովոր, թարմ ու ինքնատիպ բանաստեղծությունները **Հովհաննես Շիրազ** ստորագրությամբ: Նրան, ընթերցող լայն շրջանների հետ միասին, սկսում են ուշադրության արժանացնել գրական ավագներն ու սերնդակիցները, անգամ պետական-կուսակցական գործիչ Աղասի Խանջյանը:

Կարևոր է Հովհ. Շիրազի այն վկայություն-վերհուշը, որը հաստատում է Չարենցի իրական համակրանքը պատանի բանաստեղծի նկատմամբ: Դեռևս հյուրանոցում ապրող Չարենցն ինքն էր հրավիրել, և Շիրազը նրան այցելության էր գնացել Ռուբեն Զարյանի հետ միասին: «Հանկարծ կինը ներս մտավ և ասաց, որ Չարենցի քնելու ժամն է,- շարունակել է Հովհ. Շիրազը: -Եվ իսկապես, **Չարենցը հատակին փռված ծիածանագույն վերմակի տակ մտավ ու վայրկենապես կարծես հանգավ**: Ես մի երկար հայացք գցեցի նրա դեղնադալուկ դեմքին: Երբ անցնում էի նրա մոտով, **նա աչքերը բացեց և դեղնատերև ձեռքը պարզելով՝ բռնեց ձախ դաստակից, նայն սեղմեց ամուր և ապա ասաց. «Սիրելի մանուկ, կարծում ես, որ հանձարդ շարժվեց, աշխարհը կփրկեն»**»⁹:

Ընդգծվածներից երևում է, որ Ե. Չարենցը լավ էլ ճանաչել է պատանի բանաստեղծի ուժը և կանխատեսել նրա արգասաբեր գրական ապագան՝ անկախ «աշխարհը փրկելու» հնարավորությունից: Մեկ անգամ էլ դիմենք Հ. Շիրազի հուշերին, որոնք, մեր համոզմամբ, առավել վստահելի են. «Լսել էի, որ Թումանյանի դուստրը՝ Նվարդը, Երևանում է, հյուրանոցում,-ասել է Հ. Շիրազը հարցազրույցներից մեկում,- ուզեցի տեսնել, չտեսածս Թումանյանի կարոտն առնել: Եվ ահա հոր դեմքով, հոր աչքերով Նվարդը: Երբ իմացավ ով լինելս, ձայնեց՝ այ տղա, մի քիչ շուտ գայիր, այստեղ էին Չարենցը և իրավաբան Գրիգոր Չուբարը: **Եղիշը ինձ և Գրիգորին ցույց տվեց, ծոցից հանելով, քո երեք բանաստեղծությունը. Ալազանից էր վերցրել արտագրել**: Մեկը Նիագարայի մասին էր, մեկը «Հին աշխարհը չեմ տեսել», մյուսը չեմ հիշում:

Չարենցն ասել էր՝ **այս տղան ոչ մեկիս թրի տակով չի անցնելու**»¹⁰ (ընդգծ. մերն է- Ս. Մ.):

Չարենցը այս խոսքն իրոք ասել էր Հովհ. Շիրազի «Գարնանամուտը» դեռ չտպված: Լրացուցիչ հիշենք նաև, որ Վ. Ալազանը Հովհ. Շիրազի բանաստեղծական անդրաձայնիկ ժողովածուի՝ «Գարնանամուտի» առաջաբանը գրել է ոչ թե 1935-ին, այլ դրանից ավելի վաղ՝ 1934 թ. սեպտեմբերի 15-ին: Ուրեմն գիրքը մինչև այդ է պատ-

8 Նամակը տես **Մ. Մանուկյան**, Հովհաննես Շիրազ. նորահայտ ստեղծագործություններ, «Մուղնի» հրատ., Եր., 2002, էջ 9:

9 Հովհաննես Շիրազի մասին, ժողովածու, «Հայաստան» հրատ., Եր., 1974, էջ 100:

10 Նույն տեղում:

րաստ եղել տպագրության:

Այսպիսով՝ «Երբ է ծնվել բանաստեղծ Հովհաննես Շիրազը» հարցը միանշանակ մեկ պատասխան ունի. էական չէ, թե նրա՝ որպես մարդու, ծնունդը երբ է գրանցվել՝ 1914-ին, թե 1915-ին, էականն այն է, որ նա հենց **բանաստեղծ էր ծնվել**: Մինչև «Գարնանամուտն» էլ նա տարիներ շարունակ գրել է բանաստեղծություններ, անցել ձևավորման հետաքրքիր շրջան: Իսկ «Գարնանամուտը» ոչ միայն նրա մինչ այդ անցած ստեղծագործական ճանապարհի ամփոփումն էր ու արդեն կայացած բանաստեղծի վավերացումը, այլև գրական արգասավոր ճանապարհի նոր շրջափուլի սկիզբը, որն այնպես ջերմորեն ողջունեցին Ալ. Շիրվանզադեն ու Վահրամ Ալազանը՝ Երևանում, Ավետիք Իսահակյանը՝ Փարիզից և ապա Երևանում, Արշակ Չոպանյանը և Հակոբ Օշականը՝ Սփյուռքից: Նրանց բարի, հայրական հայացքները Հովհ. Շիրազին՝ որպես երիտասարդի և գրական մեծ երևույթի, ուղղորդեցին դեպի քնարերգության դեռևս չնվաճված բարձունքներ:

ՀԱՎԵԼՎԱԾ

3. Բանաստեղծի կոչումը

Իր կյանքի և ստեղծագործության ճանապարհն սկսելով Գյումրի ծննդավայրից և անցնելով Երևանի պետական համալսարանով՝ Հովհ. Շիրազը հայտնվեց գեղարվեստի մեծ աշխարհում ոչ թե ժամանակավոր հյուրի կարգավիճակով, այլ տանտիրոջ իրավունքով. աշխարհ, որի մեջ նա ստեղծելու էր իր բանաստեղծական յուրահատուկ աշխարհը: Այդ մեծ ու ընդգրկուն աշխարհը ճանաչել է պետք, սակայն, ցավոք, ինչքան Շիրազ մարդն է ճանաչվել, այնքան էլ՝ նրա բանաստեղծական աշխարհը: Մանկության հիշատակներից սկսվող այդ աշխարհում նախ ստեղծվել է բանաստեղծի հետ նույնացած քնարական հերոսի կերպարը, հերոս, որը նորագույն ժամանակների հայ մարդն է՝ անցած 20-րդ դարի բոլոր փորձություններով: Ստեղծել է նաև իր էությունից դուրս գտնվող քնարական ու էպիկական հզոր կերպարներ, որոնց միջոցով դրսևորվել է հեղինակային ասելիքը: Սակայն հաճախ է կաշկանդվել Շիրազի մտքի ճախրը, զանազան խոչընդոտների պատճառով չի կարողացել լիարժեք իրականացնել կյանքը գեղեցկացնելու իր երազանքներն ու ծրագրերը, բայց միշտ գիտակցել ու տառապել է իր մարդկային ու բանաստեղծական վսեմ ձգտումների և դրանց կենսագործումն արգելակող հակասությունների մեջ: Զարմանալին այն է, որ նա հասուն տարիքում էլ, գրեթե մինչև վերջ չիրաժարվեց իր մանկության երազանքներից, մաքառեց ու ընդվզեց իրեն կաշկանդող մարդկային ու հասարակական հոռի երևույթների դեմ.

2 (ՃԲ) ԳԱՐԻ, ԹԻՎ 3 (47) ԽՈՒԽ-ՄԵԱԳՐԱԲԵՐ, 2014

**Կապ միք դնի դուք իմ լեզվի նուրբ ոտին՝
Ծիածանն էլ նորից դարձնեմ իմ գոտին,-
Փայտե ձիով Վահագնից էլ վեր սուրամ,
Կապույտ թռչունն աշխարհ բերեմ, ձեզ կյանք տամ:**

**... Ա՛խ, ետ բերեք մանկությունս աստղաձեմ՝
Փայտե ձիով տիեզերքն էլ նվաճեմ... (1, 20):**

Գրական ո՞ր ուղղությանն է բնորոշ Հովհ. Շիրազ քնարերգուի պատկերավոր մտածողության համակարգը, ռոմանտիզմին, թե՛ ռեալիզմին: Այս և բազմաթիվ այլ բանաստեղծությունների մեջ, տարբեր պոեմներում դրսևորվել է գոեհիլ ու կոպիտ իրականությանը լավագույն ապագայի բուռն մղումով հակադրվելու, մետերիինկյան հեքիաթի կապույտ թռչունը կամ թունանյանական հազարան բլբուլը բերելով՝ մարդկանց երջանկացնելու ռոմանտիկական ձգտումը: Բայց շատ գործերում էլ գերակշռում են դաժանության հասնող իրական պատկերներ, որոնց բանաստեղծը հակադրվել է իր գեղագիտական իդեալով: Այս առումով

ՎԷՆ ԽԱՄԱՆԿԱՅԿԱԿԱՆ ԽԱՄՈՒՆ

բնորոշ է «Արծվի երազը» այլաբանական բանաստեղծությունը: Մարդու ազատության և մանավանդ գրողի, արվեստագետի ստեղծագործական ազատության մասին բանաստեղծական խոհն այստեղ ստացել է հետաքրքիր պատկերավոր մարմնավորում: **Արծիվ** և **վանդակ** փոխաբերությունների համատեղ գործածությունը մի կողմից **գրող** և **դարաշրջան, ժողովուրդ** և **բռնատիրություն** հակադրությունն է այլաբանորեն խորհրդանշում, մյուս կողմից՝ ռոմանտիզմի ու ռեալիզմի, երազանքի և իրականության հարաբերությունը:

**Քնեց վանդակում ու...երազ տեսավ,
վանդակից իր հին երկնքին հասավ,
ու լուռ ճախրում էր, ազատ սավառնում,
Նորից աշխարհի արքան էր դառնում
Արծիվն՝ ազատված իր ժանտ վանդակից...
Եվ ահա սիրտը թնդաց հրձվանքից՝
Տեսավ սև ցածում, սև ցելում, սև գառ
ու դեպի գառը սլացավ նա վար,
Գառնուկին առավ,
ու երկինք թռավ,
Որ տաներ բույնը, լեռները, բայց թե
Գլուխը դիպավ ձաղին երկաթե,
Զարթնեց վանդակում, վշտից շփոթվեց՝
Գլուխը դիպավ՝ սիրտն արյունոտվեց...
ու երազի հետ արծվի ահագնած՝
Ազատությունը երկնքում մնաց... (1, 121):**

Դանիել Վարուժանի նման Հովի. Շիրազն էլ իր առջև չի դրել այնպիսի խնդիր, որ անպայման լինի ռեալիստ կամ ռոմանտիկ, ընդհակառակը, նա նույնպես համադրական մտածողության կամ «սինկրետիկ արվեստի» կողմնակից է, և նրա ստեղծագործության մեջ էլ, ինչպես Արսեն Տերտերյանն է նկատել Մուրացանի առիթով, ռեալիզմն ու ռոմանտիզմը «միախառնված են՝ վերջինիս տիրապետական շեշտումով»: Հովի. Շիրազն էլ «Ձեր կարծիքը ռեալիզմի և ռոմանտիզմի մասին» հարցին պատասխանել է. «Եթե որևէ ստեղծագործություն հուզում է մարդուն, իր մեջ լրում է երկումն էլ: **Զգացմունքից գուրկ ստեղծագործությունը փայտակերտ է, թղթե վարդ:** Ո՞ր գանգն է հնչում: Առանց լեզվակի գանգը չի հնչում: Հարկավոր է **հարված ու հարված՝ զգացմունք և դարձյալ զգացմունք**, ինչպես որ գանգի լեզվակն է սրտի պես խփվելով գանգի կրծքին հանում **դողանջ կամ հառաչ, շշունջ կամ մոունջ, այդպես է լինելու արվեստի ինքնաբուխ գործը:** Իհարկե, **իրականը ռոմանտիզմի շաղախով է ընդունելի:** Եթե գանգի լեզվակը ռոմանտիզմն է, ապա գանգը ռեալիզմն է: **Երբ որ մեկը և՛ հույժ մարդ է, և՛ հույժ բանաստեղծ, իր ստեղծագործությունների մեջ և՛ ռեալիստ է, և՛ ռոմանտիկ»¹¹ (ընդգծ. մերն է- Ս. Մ.):**

Եթե գրողներին գնահատելու լինենք նրանց ստեղծած մնայուն գեղարվեստական արժեքներով, մեր գրականությանը և գեղարվեստական մտածողության զարգացմանը մատուցած ծառայություններով, կյանքի վրա ունեցած ներգործությամբ ու իրականության հետ ունեցած գեղագիտական հարաբերությամբ, ապա Հովի. Շիրազը ամենից ավելի բարձր գնահատանքի արժանի հայ բանաստեղծներից մեկը պիտի ձանաչվի: Իրոք, նա ամենաբեղմնավոր, ստեղծագործական կյանքի առումով ամենից երկարակյաց հայ բանաստեղծներից մեկն է և իսկապես թողել է գրական մեծ ժառանգություն՝ քնարական տարատեսակ քերթվածներ՝ սոնետներ, գազելներ, քառյակներ, բալլադներ, առակներ, փոքր ու մեծածավալ ասքեր,

¹¹ «Հովիհաննես Շիրազի մասին» ժողովածու, Եր., 1974, էջ 91:

քնարական, քնարաէպիկական, էպիկական, դրամատիկական պոեմներ՝ արդիական ու պատմական թեմաներով, թողել է նաև որակյալ թարգմանություններ Լերմոնտովից ու Բարաթաշվիլուց:

Գրական արտադրանքի որակի իմաստով, չհաշված այն ժամանակն ու ջանքերը, որ Հովի. Շիրազը հարկադրված վատնել է իր ստեղծագործությունները տպագրելու վրա, անշուշտ, առավել արդյունավետ են եղել 1930-1960-ական թվականները, քանի որ իրականում այս քառասնամյա ժամանակահատվածում են ստեղծվել նրա լավագույն բանաստեղծություններն ու պոեմները, որոնք էլ դարձան ոչ միայն գեղագիտական ճաշակ, այլև ազգային ինքնաձանաչողություն, մտածողություն, հոգեբանություն, բնավորություն ու նկարագիր, մայրենի լեզվի և հայրենի երկրի ու ժողովրդի նկատմամբ սեր, նվիրվածություն, համուն ազգային երազանքների իրականացման բոլոր կարողությունները նվիրաբերելու, անգամ գոհաբերվելու պատրաստակամություն դաստիարակող ուղենշային ստեղծագործություններ:

Արդ, ինչ մոտեցումով, ինչ սկզբունքներով պիտի իրականացվի բազմաթեմա ու բազմաժանր գրական այդ հարուստ ժառանգության քննությունն ու բնութագրումը:

Անշուշտ, կարելի է կատարել և՛ ժանրատեսակային, և՛ բովանդակային – թեմատիկ, և՛ ժամանակագրական, և՛ զուտ գեղագիտական քննություն: Ներկա գրական դիմանկարի պարագայում, սակայն, հիշյալ մոտեցումներով առաջնորդվելը և թեմաներից յուրաքանչյուրի առանձին քննությունը հազիվ թե իրեն արդարացնի, քանի որ ծավալվելու հնարավորությունը, այնուամենայնիվ, սահմանափակ է, և բոլոր խնդիրների վրա հավասարապես կենտրոնանալը՝ անկարելի: Մանավանդ առկա է դժվար հաղթահարելի մեկ այլ բարդություն. Հովի. Շիրազի քնարերգությունը, մեկ միասնական բանաստեղծական աշխարհի դրսևորում լինելով, ունի տարբեր թեմաների ներթափանցումներ. սերը և հայրենիքը, բնությունը և հայրենիքը, մայրը և հայրենիքը, հայրը և հայրենիքը, մարդը և հայրենիքը, Հայաստանը և Սփյուռքը, ազգայինն ու համամարդկայինը հաճախ այնպես են համաձուլված, որ իրոք դժվարանում են դրանց թե՛ միասնաբար և թե՛ առանձնացված դիտարկումները: Խնդիրը հիմնավոր լուծում չի ստանում անգամ քնարերգության իր իսկ հեղինակային թեմատիկ բաժանման առկայությամբ: Այսպես, Երկերի ժողովածուի 1-ին հատորի բաժինները հեղինակն ինքն է կազմել՝ «Մանկություն», «Գարնանամուտ», «Հայոց լեզուն», «Քնար հայրիկիս», «Քնար բալիկներիս», «Բանաստեղծի ձայնը», «Նմուշներ առականաց», «Սևանի վիշտը», «Քնար փիլիսոփայական», «Հելիկոնի երգը», «Գիրք Արարատին», «Քնար համամարդկային»: Սակայն ըստ ժողովածուների ժամանակագրական հաջորդականության քննությունն էլ կանգնեցնելու է այլ բարդությունների առջև. այդ դեպքում ինչպես վարվենք այն ստեղծագործությունների հետ, որոնք նույնությամբ կամ վերանշակված հրատարակվել են տարբեր ժողովածուներում:

Ահա թե ինչու հեղինակի գրական դիմանկարը ստեղծելիս հարկ է հրաժարվել ըստ քնարերգության թեմաների՝ նպատակահարմար թվացող ուսումնասիրության եղանակից և քննել Շիրազի երկերի բովանդակության և արվեստի, բանաստեղծական մտածողության յուրահատկություններին վերաբերող մի խումբ առավել կարևոր հիմնահարցեր, որոնք հնարավորություն կտան տեսնել ու դիտարկել բանաստեղծին ու մարդուն թե՛ իր ժամանակի մեջ և թե՛ նրանից դուրս:

Ո՞վ է բանաստեղծը և ինչ արժեք ունի նրա ձայնը: Զուտ փիլիսոփայական պարզ հարցադրումներ չեն սրանք, որ կապենք միայն գեղարվեստական ընդհանրացման հետ, մանավանդ որ հարցերի շիրազյան պատասխանները, թվում է, արտաբուստ գեղագիտական բնույթ չունեն և չեն էլ առնչվում տեսական հայտնի կաղապարներին: Ուրեմն գիտությունն ինքը պիտի պարզի հարցի շիրազյան պատասխանների բնույթն ու էությունը: Աստված ստեղծել է երկինքն ու երկիրը, և

ՀԱՎԵԼՎԱԾ

2 (ՃԲ) փարի, թիվ 3 (47) հուլիս-սեպտեմբեր, 2014

ՎԷ՛՛՛՛՛ համահայկական հանդես

բանաստեղծը նրանց ժառանգորդն ու որդին է: Սա հենց այն է, ինչ ժամանակին Թումանյանն էր ասում.

Տիեզերքի տերն եմ ես, ո՞վ է արդյոք նկատել¹²:

Ահա Տիեզերքի տիրոջ այս իրավունքով է Շիրազը ստանձնել մարդու և աշխարհի դաշնությունը պաշտպանելու պարտականությունը: Բայց դա իրագործելու համար համապատասխան ուժ և կարողություն էր պետք, որի հպարտ գիտակցությունն ուներ բանաստեղծը:

«Բանաստեղծի ձայնը մարդկության ձայնն է»,- պատգամել է Գյոթեն: Հայ բանաստեղծ Հովհ. Շիրազի ձայնն էլ սոսկ հայ մարդու և հայ բանաստեղծի ձայն չէր, այլ մարդկությանը սպառնացող մեծ վտանգն ազդարարող տագնապի ահագանգ, որի մեջ միավորված են և՛ մեր ժողովրդի դարավոր խաղաղության ըզձանքն ու չարին պատժելու վճռականությունը, և՛ «աստղերի լուսե լեզուն», և՛ արտույտների դայլալը, և՛ տարերային բոլոր զորությունները: Իսկ աշխարհի տարբեր կողմերին, տիեզերքի անծայրածիր խորություններին դիմելու բանաստեղծական իրավունքն էլ նարեկացիական, շեքսպիրյան մարդասիրությամբ, թումանյանական ու չարենցյան պատգամախոսություններով էին մկրտված: Կյանքի անմահությունը տենչացող, մի ծաղկի մահով վշտացող, մրջյունը ոտնատակ չանող բանաստեղծի ձայնն է դա, որ հայ ժողովրդի անունից ամեհի ոսոխի դեմ կռվի է կանչում բոլոր մարդասեր ուժերին.

**Ես բանաստեղծ եմ, հավերժի որդի,
Երկինքը մայրս է, երկիրը՝ հայրս,
Ես գիտեմ լուսե լեզուն աստղերի,
Եվ արտույտների դայլալ է ձայնս: –**

**Ես, որ տխրեցի մահով մի ծաղկի,
Ես, որ մրջյունը չարի ոտնատակ,
Ես մոռնում եմ՝ նա մեռնի՞ պիտի
Եվ հավերժ ընկնի մահվան ոտքի տակ...(1, 107):**

Առաջին տողում ընդգծված **երկնքի որդի** կապակցությունը բանաստեղծը հետագա հրատարակություններում դարձրել է **հավերժի որդի՝** երկնքին ու երկրին գումարելով նաև **ժամանակի** գործոնը. այդպիսով նախ վերացրել է հաջորդ տողում **երկինք** բառի կրկնությունը՝ **երկնքի որդի** և **երկինքը հայրս է**, ապա **երկինք-երկիր -հավերժ** եռամիասնությամբ ընդգծել է իր արմատների անսասանության գիտակցությունը: Այս ինքնավստահությամբ է նա հիմնավորել թշնամու պարտության անհրաժեշտությունն ու բարի կամքի հաղթանակի անխուսափելիությունը, որի շնորհիվ էլ բանաստեղծությունը դարձել է մարդասիրական մարտակոչ:

«Բանաստեղծի ձայնին» անմիջապես հաջորդում է նույն ցավից ծնված նրա երկվորյակը՝ «Տարերք» բանաստեղծությունը: Հանձարի փայլատակումներ են սրանք. իրենց պատկերների արտասովորությամբ զարմացնող այս բանաստեղծություններում կուտակված է մտքի և զգացմունքի վիթխարի էներգիա:

Կարելի է երևակայել միայն, թե ժամանակին ոգևորության ինչ լիցքեր էին տալիս շիրազյան այս հրեղեն բանաստեղծությունները ֆաշիզմի դեմ հերոսաբար մարտնչող խորհրդային զինվորներին: Դրանք նախ և առաջ՝ անրապնդում էին հայրենիքի սերը և նրա համար կենաց ու մահու կռվի իրավական ու բարոյական արդարացիության գիտակցությունը: Բարեբախտաբար կան նրանց հիացական վկայությունները. հիշենք երբեմնի զինվորի՝ Սերո Խանգադյանի խոսքը այդ բանաստեղծությունների անմիջական ներգործության մասին. «Հազիվ թե հա-

12 Հովհ. Թումանյան, Քառյակներ, «Հայագիտակ» հրատ., Եր., 2010, էջ 44:

մաշխարհային ժամանակակից պոեզիայում այսպիսի նվիրվածություն գտնվի.

**Իմ սուրբ հայրենիք, դու սրտիս մեջ ես,
Դու սրտիս մեջ ես, ո՛չ լեզվիս վրա,
Իմ սրտի միջից՝ թե սիրտս ձեռքես՝
Դրոշիդ բոցը պիտի հուրհրա¹³» (1, 111):**

Մեր մյուս նշանավոր գինվոր գրողը՝ Մկրտիչ Սարգսյանն էլ մի կարևոր վկայություն ունի. «1944 թվականին Ուկրաինայի Կրասնի Լիման քաղաքի հոսպիտալում հանդիպեցի մի հայ կապիտանի, որն իր դաշտային պայուսակում, մարտական և շարային կանոնադրությունների հետ միասին, պահում էր Հովի. Շիրազի «Երգերի գիրքը», որը լույս էր տեսել 1942 թվականին:

–Բաքվում գնեցի, ռազմաձակատ գնալիս,– ասաց նա:–**Երկու տարի է միասին ենք, ամբողջն անգիր գիտեմ:**

–**Ձինվորական կանոնագրքերի ընկերությանը չի բռնում,**–ասացի ես:

–Սա էլ **մարդկային հոգու կանոնադրություն է,**– ժպտաց կապիտանը:

–**Ճակատային ընկերս է, ծանր օրերի ընկերս...**»¹⁴ (ընդգծ. մերն է –Ս. Մ.):

Այո, Հովի. Շիրազը ստեղծել էր «մարդկային հոգու կանոնադրություն», որը գինվորի համար դարձել էր ճակատային նեղ օրերի ընկեր: Պատերազմին, արյունահեղությանը և ավերումներին Հովի. Շիրազը հակադրում էր խաղաղությունը, մարդկային հոգու գեղեցկությունը, ապրում մեր ժողովրդին բնորոշ ստեղծագործ աշխատանքի երազանքով.

**Իմ երազի մեջ, կանաչ դաշտի մեջ
Կռիվն անցել էր, մաճկալ էի ես:
Իմ երազի մեջ, դալար դաշտի մեջ
Խոփիս տակ ընկավ մանուշակ մի հեզ.–
Դալար դաշտի մեջ, կանաչ դաշտի մեջ
Կարծես թե սիրտս պոկեցին կրծքես...(1,114):**

Պատերազմի շրջանի Հովի. Շիրազի քնարերգության մեջ հայրենիքը ներկայացվում էր առավել լայն ընդգրկումով ու իմաստավորումով: Այն միայն Խորհրդային Միությունը կամ նրա պետական սահմաններում ծվարած փոքրիկ Հայաստանը չէր: Դա նաև «լուռ ու ամայի» մեծ Հայաստանն էր՝ իր ողբերգական ու հերոսական պատմությամբ, ծանրածանր կորուստներով և արդար հատուցման հավատով ու գալիքի հույսերով: Այլապես չէր ծագի հայ մարդու համար ամենացավագին հարցը՝ **ո՞րն է մեր հայրենիքը:**

Միանգամայն բնական է, որ այդպիսի հարցադրում պիտի ծագեր հենց այդ օրերին, որովհետև Հովի. Շիրազը կարծում էր, որ ֆաշիզմի դեմ հայ ժողովրդի, խորհրդային բոլոր ժողովուրդների, աշխարհի առաջադեմ ուժերի պայքարը հենց Հայաստանի և հայության պաշտպանության համար է: Այսպես է ստեղծվել մեր հայրենասիրական քնարերգության գլուխգործոցներից մեկը՝ հանրահայտ «Ո՞րն է, բաբո, մեր հայրենիք» բանաստեղծությունը:

Պարզվում է՝ Հովի. Շիրազը դեռ 1942 թ. գրած է եղել «Մասիսական» խորագրով շարք. այդ շարքից այս բանաստեղծությունը առաջներում տպված է եղել տարբերակի սխալ նշումով՝ 1944, երկրորդ տողի աղավաղումով և առանց ընդգծված վերջին ընդհանրացնող անչափ կարևոր երկու տողի: Բերում ենք Մ. Մանուկյանի հայտնաբերած տարբերակը, որին խմբագրի գրիչ ու մկրատ բարեբախտաբար չեն դիպել.

13 Հ. Հովնաթան, Զրույցներ, «Սովետական գրող» հրատ. , Եր., 1992, էջ 91:

14 Սարգսյան Մ., Ժողովրդի մեծ բանաստեղծը, «Հովհանես Շիրազի մասին», ժողովածու, էջ 78:

**Կովի դաշտի մեջ ընկա վիրավոր,
Օտար մի աղջիկ խոնարհվեց վրաս,
Եվ ապաքինվեց ասես վերքս խոր,
Երբ բացեց կապույտ աչքերը վրաս,
Թ՛վաց, թե բացվեց հեռվում հեռավոր
Իմ Հայաստանի երկինքը վրաս,-
Բացվեց, որ թռչեմ՝ ուր հողն ես իմ հոր.
Քեզ գոհվեմ, որ ինձ անհաս չմնաս...**(ընդգծումը մերն է-Ս.Մ.)¹⁵:

1942 թ.

Բայց ձմարտությունը թելադրում է նաև ասել, որ առանց գուտ ազգային թեման մարմնավորող կամ Մասիսին նվիրված բանաստեղծությունների և այդ փոխաբերությամբ ստեղծած բանաստեղծական պատկերների էլ, որոնք միայն ազգային արժեք չեն, Հովի. Շիրազը մեծ ու ձմարիտ բանաստեղծ է նաև համամարդկային թեմաների մարմնավորումով:

Ներշնչվելով միջնադարյան տաղերգուներից և Պեշիկթաշյանի, Հովհաննիսյանի, Իսահակյանի, Մեծարենցի, Վարուժանի ու Տերյանի պոեզիայով, բայց ավելի շատ իր սեփական բանաստեղծական խառնվածքի ու գեղագիտական ծրագրի թելադրանքով՝ Հովի. Շիրազը «Գարնանամուտից» հետո էլ նոր ուժով հնչեցրեց գարնան թեման՝ նրա մեջ տեսնելով կյանքի նորոգման, թարմության ու վերածնության խորհուրդը: Նրա բանաստեղծություններում գարնանային բնապատկերները ստացան ուրույն բովանդակություն և իմաստ, ներկայացան որպես մշտանորոգ մեր ժողովրդի նորագույն ժամանակների կենսափոխակապություն, որպես հարատևման բանաձև.

**Երանի մեռնող ձյունների, որ միշտ՝
Ետևից կանաչ գարուն են թողնում...(1, 40)**

Հանուն կյանքի՝ պայքարի և գոհաբերության մեջ էր բանաստեղծը տեսնում կյանքի հավերժության իմաստն ու խորհուրդը: Իր քնարական հերոսի՝ կենսական գորեղ կարելիություններով օժտված **մարդկային սրտի** և **ալևոր կաղնու** ու **զառամյալ արծվի** փոխաբերական համեմատությունը հենց այդ է խորհրդանշում.

**Սիրոս ալևոր կաղնու մեջ դրի՝
Չորացած կաղնին նորից բողբոջեց,
Բարձրացավ, կանգնեց ընդդեմ հողմերի
Եվ ջահելացած՝ նորից շառաչեց:
Ու մատաղ սիրոս՝ ճախրանքի ծարավ
Ջառամյալ արծվի կրծքի տակ դրի,-
Մեռնող արծիվը թև առավ, թռավ
Որսի ետևից ջահել օրերի...** (1, 31-32):

4. Հայրենասիրության չափանիշը

Գասական հայ քնարերգության ազնիվ երակը՝ Հովի. Շիրազը, իր ստեղծագործությամբ կապող օղակ եղավ 1930-ական թթ. ոչնչացված ու արքտրված բանաստեղծների և իր հաջորդների միջև՝ ծավալելով շուրջ կեսդարյա գրական

¹⁵ Բանաստեղծությունը տե՛ս «Մ. Մանուկյան, Հովի. Շիրազի անտիպ երկերը», Եր., 2002 գրքում: Երկրորդ տողի առաջին **օտար** բառը տպված է եղել **ոռու**, իսկ վերջին ընդգծված երկտողը հանվել է:

բեղմնավոր գործունեություն, ջանալով նոր սերունդների գիտակցության ու էության մեջ մշտարթուն պահել գեղեցիկի զգացողությունը, կորուսյալ հայրենիքի գաղափարը և այն վերագտնելու հույսը, ազգային ոգին ու միտքը:

Այս իմաստով, ինչպես իրենց ժամանակին՝ Աբովյանն ու Նալբանդյանը, Պապկանյանն ու Բաֆֆին, Թումանյանն ու Իսահակյանը, Վարուժանն ու Սիամանյուն, Տերյանն ու Չարենցը, Հովհ. Շիրազն իր ստեղծագործությամբ նորագույն ժամանակներում հայոց ոգու և ստրքի, դիմագծի ու նկարագրի, սիրո ու նվիրվածության և ազգային երազանքների լավագույն պատվաստողն էր սերունդների գիտակցության մեջ: Սրանով հանդերձ՝ նա լայնախոհ փիլիսոփա էր իր բազմալար քնարով, որը հրաշալիորեն գիտակցում էր բանաստեղծության և բանաստեղծի դերը հայ ժողովրդի կյանքում:

ՀԱՎԵԼՎԱԾ

**Ես՝ վերջին արքան Հայաստանի,
Ես՝ պոետների արքան ջահել,-
Իմ թագը խոսքն է իմ ծիրանի,
Որ միշտ իմ գլխից վեր եմ պահել:
Եվ Արևելքն է իմ ծիրանին,
Ինձ գայիսուն է գրիչս պերճ,
Եվ իմ արյունն է երգիս գինին,
Ես՝ պատերազմին հավիտյան վերջ...
Բայց թագս թեկուզ արև դառնա
Դեռ մանուկ գլխին իմ անհագուրդ,-
Քեզ կխոնարհեն, ես քեզ ծառա,
Ինձ թագադրած իմ ժողովուրդ:
Բայց ինձ գահընկեց իսկույն արա,
Թե չհամբուրեմ փոշին ճամփուղ,
Թե սանդուղք չանեմ իմ թագը քեզ,
Որ հազար ու մի Մասիս ելնես...¹⁶**

Զ (ԺԲ) քարի, թիվ 3 (47) հուլիս-սեպտեմբեր, 2014

Բանաստեղծների «ջահել արքան», որի թագը միշտ իր գլխից վեր պահած հայրենի խոսքն է, պատրաստ է գահընկեց լինելու, իր գահն ու թագը վերելքի սանդուղք դարձնելու: Նրա անմահության տենչն անգամ անձնական չէ. հանուն հայության հարատևման՝ Շիրազն իր մեծ կռիվն էր վարում նույնիսկ մահվան դեմ, չէր ուզում «հավիտյան քուն ունենալ», որպեսզի հետո, «դարը մի օր կենդանություն ունենալով», նորից պետք գա, եթե իր ազգը նեղության մեջ հայտնվի:

**Լոկ մի բանի հանմար կուզեմ անմահություն ունենալ,
Այս աշխարհում դարը մի օր կենդանություն ունենալ,
Որ քեզ նորից գամ օգնության, ազգ իմ, երբ որ նեղն ընկնես,-
Ահա ինչու չէի ուզի հավիտյան քուն ունենալ (1, 325):**

Թե՛ մանկության, թե՛ գարնան ու քնության, թե՛ սիրո ու մայրական, թե՛ հայրենիքի, թե՛ խոհական թեմաներն արծարծելով՝ նա ստեղծել է դասական արժեքներ: Ուստի **գարուն** ու **ձմեռ**, **օրոցք** ու **գերեզման** հակադիր փոխաբերությունները՝ որպես համեմատության եզրեր, հաճախ են հանդիպում Հովհ. Շիրազի բանաստեղծություններում: Բայց ստորև ներկայացվող «փոքրիկ» բանաստեղծությունը հաղթանակող կյանքի հիմնն է և հպարտ մարդու դառը քնծիծաղը դաժան ու անտղորմ մահվան երեսին: Սա նաև կենսասեր քնարերգուի մի յուրատեսակ ողբերգական լավատեսության արտահայտությունն է՝ Մեծարենցի «հա-

ՎԷՄ համահայկական համադես

16 Հովհ. Շիրազ, Հատընտիր, Եր., 2012, էջ 101:

մաշխարհիկ բաբախումների» պես մոլորակի բոլոր ծայրերում ու անկյուններում բոլոր գույսի ու ցեղի մարդկանց ընկալելի ու հասկանալի.

**Ինչքան գարուններ ձմեռներ դարձան,
Աշխարհը կոկոն, ջահել է նորից:
Ինչպիսի՜ մարդիկ եկան ու անցան,
Աշխարհը կոկոն, ջահել է նորից,-
Անթիվ օրոցքներ գերեզման դարձան՝
Աշխարհը մանուկ, ջահել է նորից (1, 113):**

Այդ «հավիտյան ջահել» աշխարհի մի անկյունն էր բանաստեղծի հայրենիքը՝ իր տառապած ու բզկտված հողով, որի մի փրկված նվիրական պատառիկի վրա հայությունն իր նորոգ կյանքն էր կերտում խորհրդային ժամանակներում: Բանաստեղծի ըմբռնմամբ՝ այդ փոքրիկ հայրենիքն իր հող ու ջրով, իր լեռ ու ձորով ամենից թանկն է աշխարհում՝ որպես աշխարհացիի հայության հույսի փարոս, որն արժանի է ամենախոր սիրո և ամենաթանկ գոհաբերության: Հետևյալ բանաստեղծության մեջ որպես հայրենիքը մարմնավորող պատկերավորման-արտահայտչական հիմնական միջոցներ են գործածվել **ծաղիկ, հայրենի ջրեր, սև ժայռ** և **հող** փոխաբերությունները: Նրանց այլաբանությամբ է ձևավորվում միտք ու զգացմունք միավորող և բանաստեղծի բաղձանքն արտահայտող գեղարվեստական այն բացառիկ պատկերը, որը դարձել է հայրենասիրության բարձրագույն չափանիշ.

**Հող պիտի դառնամ, որ հավերժ անցնեք
Իմ սրտի միջով, հայրենի ջրեր...(1, 222):**

Մարդու և հայրենի հողի միասնության, հայրենիք-ժողովուրդ ամբողջականության և այդ գերգոյություններին նվիրվածության մասին, թվում է, ավելին հնարավոր չէ ասել: Սակայն Հովի. Շիրազն ավելի է խորանում այդ միասնության էության մեջ և հայտնաբերում, որ հայրենիք-բնօրրանը հայ մարդու ազգային բնավորության, ոգու և կամքի դայակն ու դաստիարակն է, նրա ազգային նկարագրի ձևավորողը: Ահա ինչու նեղ ու միակողմանի են բանաստեղծին սուկ որպես ազգային ցավի ու Մասիսի միալար երգիչ արժևորողների տխուր բանաձևումները: Շիրազի բազմալար ու բազմաթեմա քնարերգության մեջ գրեթե անտեսվել են **հայոց ոգին մարմնավորող գործերը**: Մինչդեռ նա նախ և առաջ իրեն դրսևորել է որպես **հայ ժողովրդի ոգու բանաստեղծ ու կենսագիր**:

Շիրազի «Որպես վշտի օրերն հայոց» քերթվածը մեր ոգու խորության ու բարձրության փառաբանությունն է: **Ձորեր** և **լեռներ** փոխաբերությունն այստեղ դարձել են հիմնական արտահայտչամիջոցներ, որ կրում են պատկեր-համեմատության ամբողջ ծանրությունը: Այնքան միասնական են հակադիր այդ երևույթները, այնքան ներդաշնակ՝ հայ մարդու բնավորությանն ու էությանը, որ դժվար է որոշել՝ ո՞ր մեկն է մյուսով պայմանավորված.

**Որպես վշտի օրերն հայոց
Այնքան խորն են ձորերն հայոց,
Այնքան խորունկ ու այնքան մութ,
Որ գետերը մեր հորձանուտ
Մթնում ահից մոնչացող
Մորը կրցրած ու դուրս փախչող
Վիշապաձագ են ինձ թվում՝
Մեր ձորերի
Մութ անձավում:**

**Բայց չգիտեմ՝ ձորերն են մեր
Ոգուն տվել խորքեր խորին,
Թե՛ մեր ոգին է շռայլել
Իր խորությունն այս ձորերին:**

**Որպես կամրի դարերն հայոց
Այնքան բարձր են սարերն հայոց,
Այնքան բարձր ու այնքան վեր,
Ու քրտինքը մեր ճակատից
Միշտ ամպերի ձեռքն է սրբել,
Ու կթվա՝ գագաթներից
Մարդ կարող է
Ասող համբուրել:
*Բայց չգիտեմ՝ մեր ոգին է
Բարձունք տվել մեր լեռներին,
Թե՛ մեր ոգուն՝ սարերն են վեհ
Տվել բարձունք ասարեղային...*(1, 53):**

5. Շիրագի քնարական և էպիկական պատկերները

Անձնական խոհերի ու զգացմունքների համամարդկայնացման իմաստով նույնպես Հովհ. Շիրագը բացառիկ է: Բանաստեղծություններ ունի, որոնք մարդկային ներաշխարհի, ալեբախվող ու դրամատիկ հոգեվիճակների հանձարեղ մարմնավորումներ են՝ աշխարհի մեծագույն սիրերգակների գրչին արժանի: Զգացմունքների արտակարգ խորությամբ ու անմիջականությամբ, մտքի տրամաբանական հետևողականությամբ օժտված զարմանալի կուռ կառույցներ են դրանք: Քնարական նուրբ ու քնքուշ կոթողների կողքին առկա են սայաթնության գերխիտ հզորության տաղեր ու երգեր՝ աֆորիզմի հասնող բանաձևումներով, ինչպես՝

Ինձ իմ սիրո պալատներից որք դուրս արին, էլ ինչ երգեմ...(3, 184):

մորմոքումով խոստովանել է բանաստեղծը միջնադարի վերջի մեծ տառապյալ սիրահարին:

Բայց սիրո մեջ մեծ դժբախտությունը նույնքան մեծ սիրո հետևանք է: Կյանքը երբեմն մարդուն դնում է առանձնահատուկ վիճակների մեջ, տալիս է կարճատև երջանկություն, որի քաղցրությունը դեռ չվայելած՝ զրկում է նրան ու, ինչպես այս դեպքում, հարկադրում ճաշակելու դառնության բաժակը: Կորցնելուց հետո է իմաստավորվում արդեն հուշ ու պատրանք դարձած երջանկությունը, որին հաջորդում են անդառնալիության գիտակցության պատճառած ցավն ու կսկիծը, որոնք միայն ոգու արիությամբ կարող են հաղթահարվել: Այդ մեծ սիրո վշտից են ծնվել բազմաթիվ քնարական գոհարներ, որոնցից հատկապես մեկը՝ 1947 թ. գրված «Ես դաշտի տաղավար էի» սկսվածքով բանաստեղծությունը, որը կարծես գրվել է սիրո երջանկությունը կորցրած բոլոր մարդկանց անունից, յուրատեսակ «մի կյանքի պատմություն» է: Ամենից առաջ այն իր՝ հեղինակի անձնական սիրո ու կարոտի մարդկային դրաման է՝ կարճատև երջանկության ու նրա փլուզման հակադրության պատկերումով: Բայց այն նաև անձնականի միջոցով մարդկային համանման բարդ իրավիճակների ընդհանրացված ու խիտ պատկերն է, որը, սակայն, իր զգացմունքային խորությամբ, բարձր է ամեն տեսակ անձնականություներից.

Ես դաշտի տաղավար էի՝ հեռավոր, կանաչ դաշտի մեջ,
 Դու գարնան ծիծեռնակի պես բույն դրիր իմ տանիքի տակ,
 Երգեցիր քո սերն առաջին, առաջին գարունը քո պերձ,
 Դայլայլո՞ ծիածան դարձավ ու գրկեց հոգիս բովանդակ:
 Ու բուրեց համբույրդ առաջին, ու ծաղկեց տաղավարս հեռվում,
 Առաջին սիրո ծաղիկդ՝ ձնծաղիկն իմ կրծքին տեսար,
 Երդվեցիր, թե պիտի քաղես դու վարդն էլ իմ սիրո դաշտում,
 Պալատ է տաղավարդ, ասիր, ու դաշտդ՝ գմբուխտե մի աշխարհ...
 Բայց հեռվում դու տեսար մի օր միրաժե պալատ մի շքեղ,
 Ու տարված, կախարդված՝ թռար իմ սիրո տանիքի տակից,
 Քո ճամփին աչքը բաց մնաց արցունքիս առվակը բյուրեղ,
 Դու պալատ տարար՝ պոկելով գարուններն իմ սրտի դաշտից...
 Եվ հիմա տեսնո՞ւմ ես արդյոք ցնորքիդ պալատից շքեղ,
 Թե ո՞նց է փլվում դաշտի մեջ խրճիթս կարոտի հողմից...¹⁷

Բուն ողբերգությունը, սակայն, ներկայացվում է բանաստեղծության երկրորդ դրվագում՝ այն պահից, երբ հեռվում հայտնվում է «միրաժե շքեղ պալատը»: Սիրո ծիծեռնակի հեռանալուց հետո ինչ է մնում բանաստեղծին երբեմնի դրախտասնան տաղավարից ու «գմբուխտե աշխարհից». մնում են «սրտի դաշտից պոկված գարուններին» ցավ ու «արցունքի բյուրեղ առվակը», «կարոտի հողմից» փլվող տաղավարը, որը լքող–հեռացողը չի էլ նկատվում հեռավոր շքեղ պալատից: Այդ անկյալ վիճակն է, սակայն, կյանքի հատակից իր երգի սանդուղքով վեր բարձրացած բանաստեղծին պարզևեղ մի «հպարտ տխրություն», որը նրա անկապտելի սփոփանքն է և հաղթանակի առհավատչյան. դրանով է նա հաղթում «կյանքի մույթ սատանային»:

Հ. Շիրազին բնորոշ են թե՛ քնարական, թե՛ էպիկական պատկերավոր մտածողության բռնկումային հզոր թռիչքներն ու անսպասելի գեղարվեստական գյուտերը, խոր կենսափիլիսոփայությունը բանաստեղծական դասական ձևերով արտահայտելու բացառիկ կարողությունը: Հայրենիք, մայր, հայր, սեր, բնություն, համամարդկային խոհեր մարմնավորող քնարական ամենանուրբ մանրաքանդակներից մինչև խորիմաստ քառյակներ ու բանաստեղծություններ, մարդկային հարաբերություններ պատկերող սրամիտ առակներից մինչև արդիական ու պատմափիլիսոփայական երկարաշունչ ծանրակշիռ պոեմներ, որոնք, հայության ազգային իդձերի, զգացմունքների ու ձգտումների մեծարվեստ արտահայտություններ լինելով, սերունդների վրա ունեցել են ամենաանմիջական ներգործություն: Հենց սրա շնորհիվ է Շիրազը դարձել այն համաժողովրդական բանաստեղծը, «որի ողնաշարի վրա է բարձրացել հետադարձացյալ շրջանի մեր ամբողջ գրականությունը»¹⁸: Սա հենց Պ. Սևակի անշրջանցելի բնորոշումն է: Ինքնահաստատված Պ. Սևակը, որ արդեն բանաստեղծական մտածողության «ուրիշ հասակ» էր և նոր դպրոցի ներկայացուցիչ, նաև բանասիրության դոկտոր էր, միջնադարագետ – սայաթնովագետ ու լրջմիտ գրական քննադատ, հակառակ միակողմանի սևակապաշտների՝ անվրեպ գիտեր անմրցելի «Բիրլիականի» հեղինակի՝ հանուն հայության ազգային իրավունքների և «ընդդեմ ձուլման ահ ու մահի» ոգի ի բռնի մարտնչող ազգապահի բացառիկ ժողովրդայնության գաղտնիքը, գիտեր ինչ կարող է անել այդ բնաբուխ բանաստեղծը, անկարելի է ուրիշների համար:

Շիրազն արդարամիտ էր ու անխնա պատեհապաշտների ու հաճկատարների հանդեպ, հանկարծաստեղծ էր, ահավոր սրամիտ, օժտված էր հեզնելու, ծաղրելու բացառիկ ուժով, որ դրսևորվում էր խորիմաստ առակներում, աֆորիզմի արժեք ունեցող պարադոքսային պատկերներում, ինչպես՝

17 **Հովհ. Շիրազ**, Քնար Հայաստանի, առաջին գիրք, Եր., 1958, էջ 150:

18 Պ. Սևակն այս խոսքերն ասել է 1969 թ. Երևանի Պոլիտեխնիկական ինստիտուտի դահլիճում ուսանողների հետ հանդիպման ժամանակ:

**Ում համար շատ է ավանակն էլ խեղճ՝
Նժույզ է քշում ծիածանի մեջ¹⁹:**

ՀԱՎԵԼՎԱԾ

Զ (ԺԲ) փարի, թիվ 3 (47) հուլիս-սեպտեմբեր, 2014

ՎԷՎ համահայկական համբեր

Կարելի և անկարելի բոլոր միջոցներով անհնարին ժամանակներում Շիրազն արծարծում էր համայն հայությանը մտահոգող օրախնդիր հարցերը: Ուստի հենց նա էլ իր տարաբնույթ գործերում հետևողականորեն պիտի հնչեցներ հայոց ողբերգության ու կորուստների թեման՝ ժողովրդից պետականորեն թաքցվող եղեռնի իրողությունը խորհրդային հանրությանը ձանաչելի դարձնելու և նույն այդ պետության ու աշխարհի առջև Հայ դատը բարձրացնելու՝ պահանջատիրոջ իրավունքով: Շիրազը դա անում էր երբեմն այլասացությամբ, երբեմն՝ ուղղակի, երբեմն՝ շշուկով, երբեմն՝ մոռուչով: Երբեմն էլ դիմում էր փոխաբերության և այլաբանական խոսքի ուժին: Եվ եթե դեռևս 1940-ականներին «Հայոց դանթեականը» (առաջին անտիպ տարբերակը), «Սիամանթո և Խջեգարե» (1942 թ. և հետագա լրանշակումները), «Քնար Հայաստանի» (1958) գրքում ընդգրկված «Էլեգիա» հատվածը՝ «Հայոց դանթեականը» պոեմից, բազմաթիվ բանաստեղծություններ՝ «Դեռ չեմ տեսել ծովը Վանա», «Արարատ», «Կտակ», «Այն ի՞նչ է ասում» և այլն, 1950-ական թթ. գրած և հասկանալի պատճառներով չտպված «Ղարաբաղի ողբը», «Վերջին իղձ» և «Շիրազնամե» պատգամախոսությունները չափավոր համարձակությամբ բաց-ձակատային էին, ապա նույն գրքում տպված «Հանգիստ չէ Գանգեսն իմ հեռավոր» բանաստեղծությունը համարձակության բոլոր սահմանները գերազանցող այլաբանության մի բացառիկ գլուխգործոց էր: Հ. Հայրենի բանաստեղծության՝ **Հանդարտ է Գանգեսն իմ հեռավոր** տողը բնաբան դարձնելով ու նրան հակադրվելով՝ Շիրազն առաջինն է հայ իրականության մեջ 1950-ական թթ. խորհրդային գրաքննության պայմաններում տպագիր խոսքով արտահայտվել դեռ դիակներ տանող հայոց մայր գետերի և շիրմաթմբերի ու գանգալեռների, լուռ ու ամայի Արևմտյան Հայաստանի մասին՝ այդպիսով համաշխարհայնացնելով հայոց վշտի ողբերգականությունը:

**Հանգիստ չէ Գանգեսն հեռավոր, հեծում է իր մռայլ ափերին,
Իր երկրի հերարձակ մոր պես՝ գլուխն է քարեքար զարկում.
Ա՛խ, նորից հողմերը նրա հառաչունն իմ հոգուն բերին, –
Հանգիստ չէ Գանգեսն հեռավոր, աշխարհով մեկ է հեկեկում...
Հեծում են, ծառս են լինում ջրերը նրա արտասվող,
Հողմակոծ անապատն անցնող առյուծի բաշերի նման,
Եվ սիրտ է կտրապոս ողբը՝ ինձ հեռու ափերից հասնող,
Հանգիստ չէ Գանգեսն ահավոր. նա բողոք ունի անասիման,
Նա քեզ է երազում, Վոյզա, նա մոռնչ ունի խելահեղ,
Հանգիստ չէ Գանգեսն աղեկեզ, հանգիստ չեն գեպերն հեռավոր՝
Ա՛խ, նրանք դիերն են փանում սովափանջ որդոց վիրավոր
Ու ձամփին դեռ ծառս են լինում՝ որդոցը փնտրում գերեզման, –
Հանգիստ չէ Գանգեսն հեռավոր, հանգիստ չէ իմ սիրտն այսպեղ...²⁰:**

Մեր ընդգծած տողերում ընթերցողն անմիջապես կնկատի, որ Գանգեսն ու Վոլգան այլաբանական խորհրդանիշներ են, փոխանունություն – համըմբռնումներ, և ինչպես Դ. Վարուժանի «Ջարդը» բանաստեղծության մեջ Հռենոսը, Թեյմզը, Սենը և Վոլգան²¹ համապատասխանաբար մատնանշում են Գերմանիան, Անգ-

19 **Հովհ. Շիրազ**, Քնար Հայաստանի, գիրք երրորդ, «Հայաստան» հրատ., Եր., 1974, էջ 252:
20 **Շիրազ Հովհաննես**, Քնար Հայաստանի, Եր., 1958, էջ 347:
21 Խորհրդային վերջին «Հայ դասական գրողներ» մատենաշարով հրատարակված «Սիամանթո, Դ. Վարուժան» հատորում «Ջարդը» բանաստեղծության «Վա՛ց Հայաստան, պատռեծ ծիծերդ ու հոսե ժահիր մը դիտության...» հատվածից անամոթ ստորաբարշտությամբ հանել էին

լիան, Ֆրանսիան ու Ռուսաստանը, այստեղ էլ Գանգեար՝ Եփրատ, Արաքս ու Հայաստան պետք է հասկանալ (որովհետև 1950-ական թթ. այդպես ուղղակի գրել կարելի էր, բայց տպագրելն էր անկարելի): Ուստի Հովհ. Շիրազի բողոքն ու մոռնչը Վոլգա-Ռուսաստանին են ուղղված, ինչպես «Ղարաբաղի ողբը» բանաստեղծության մեջ «**Հյուսիսն ինքն էլ սառցալուռ է, վայ ինձ ու քեզ, այ Ղարաբաղ**» տողը²²:

Ինչո՞ւ իրագործվեց մեծ ոճիրը, ո՞վ է միլիոնավոր անմեղ հայերի թափված արյան պատասխանատուն, Դ. Վարուժանի արտահայտությամբ՝ «Վրեժն ո՞վ պիտ կշռե»: Հ. Թումանյանը թշնամու էությունը բնորոշելիս ընդգծել է՝ թուրքը «մարդակեր-գազան մարդուց» հազար դարի զարգացմամբ հասել էր «բերանն արնոտ մարդակեր» բնութագրին: Հովհ. Շիրազի համոզմամբ՝ պատճառը մարդու մեջ ապրող գազանն է, որը, նրան աստվածային բարության բարձունքներից իջեցնելով, դարձնում է անգույթ սատանա, **խղճի բացակայությունն է, ազահության ու իշխանատենչության** համաշխարհային չարիքը, որոնց դեմ պետք է ծավալվի համամարդկային համախումբ պայքար՝ բռնելու չարագործի ձեռքը:

Մարդ-բարձունքից ընկած մարդն է ընդունակ մեծագույն չարագործությունների: Իսկ բանաստեղծի սիրտը խղճի սափոր է՝ լցված արցունքով, որ նա լացել է աշխարհի համար, մի ծաղկի համար, մի մեղքի համար, «Հայ կոտորածի արցունքի համար»:

6. Շիրազի պոեմները

Հովհ. Շիրազի բանաստեղծական դիմանկարն ամբողջական չի լինի առանց նրա ստեղծագործության պատկառելի մասը կազմող պոեմների քննության: Դեռևս 1930-ական թվականներից է նա հմտացել պոեմի ժանրի մեջ՝ դրսևորելով բանաստեղծ-վիպողի իր հզոր շնչատությունը, հետաքրքրաշարժ դիպաշար կառուցելու, գործողություններ պատկերելու և հոգեբանական խորությամբ կերպար-բնավորություններ կերտելու իր վարպետությունը: «Սիամանթո և Խջեգարեից» բացի՝ նույն տարիներին նա Աղասի Խանջյանի սպանության առթիվ գրել էր «Մոկաց Միրզա» պոեմը, որից հազիվ մի գլուխ է պահպանվել, «Սասունցի Դավիթ» պոեմը, որի երկրորդ և երրորդ գլուխները դարձյալ «կորել» են խորհրդային գրահրատարակիչների մեղքով: Ստեղծագործական հզոր վերելք ապրող Հովհ. Շիրազի հանձարի հզոր բռնկումներից էին աստվածաշնչյան թեմաների վերարծարծումներով ստեղծված պոեմները, որոնց բարձրակետը անմրցելի շքեղ պատկերավորությամբ 1942 թ. գրված «Բիրլիականն» է: Այն մենք անվանում ենք «Մայր բիրլիական»՝ նկատի ունենալով, որ նրանից հետո գրվեցին «Բիրլիականի վերջաբանը», «Բիրլիականի երկրորդ արարչականը», «Աստծու գլուխգործոցը», «Ջևսի ծաղիկը», «Սիրո և իմաստության սրինգը», «Շղթայված մեղեդիներ», «Ինքներգանք համամարդկային» գործերը, որոնք հեղինակը 1982 թ. իր Երկերի ժողովածուի 2-րդ հատորում թեմատիկ – գաղափարական և գեղարվեստական այլ ընդհանուր հատկանիշների հիմքով, որպես ««Բիրլիականի» զարմից ծավածների», միավորել է պոեմների մեկ ընդհանուր շարքի մեջ, որը խորագրել է «Բիրլիականները»: «Բիրլիական» խոհաքնարական մայր պոեմը տպագրվեց երկու տարի անց՝ 1944-ին, և բազմապատկեց նրա հեղինակի բանաստեղծական հոշակը: Բոլոր հանձարեղ գործերի նման՝ այս պոեմն էլ միանշանակ ընդունելության չարժանացավ. ժամանակի մեծերի անվերապահ հիացական գնահատականների կողքին հայտ-

Վարուժանի գրած Վոլգան, ինչպես Սիամանթոյի «Կախաղաններու կատարեն» բանաստեղծությունից «բարի նպատակով» հանել էին Դերսիմի Բեռու, Արծիվ Պետոյի և ուրիշ անցանկալի անուններ պարունակող տողերը – Ս. Մ.:

22 Բանաստեղծության ձգգրված ու ամբողջական տարբերակը տպագրված է մեր «Հովհաննես Շիրազ» մենագրության մեջ (Եր., 2012, էջ 253–254):

նվեցին աղքատիմաց չարամիտների թեր ու դեմ կարծիքները: «Ո՛ր է տանում մեզ Շիրազը յուր բիրլիականներով. ստալինյան լուսավոր իրականությունը թողած՝ աստղերի մեջ է կյանք որոնում»– բացահայտ նենգ համախոսականը, որն ըստ էության քաղաքական ծանր մեղադրանք էր, որը ստորագրել էր 26 գրող ու քննադատ: Ուստի 1976 թ. ՀԳՄ 7-րդ համագումարում, որին ներկա էին ստորագրածներից շատերը, իր ելույթում Հ. Շիրազը ցավով հիշեց և հիշեցրեց այդ դեպքը՝ սրամտորեն հայտարարելով, թե «Ես եմ առաջին տիեզերագնացը, որովհետև ձեր Գագարիններն իմ հետևից եկան՝ աստղերի մեջ կյանք որոնելու...»²³:

«Բիրլիականները» կարող էին ստեղծվել միայն այն հեղինակի գրչով, ով Աստվածաշնչի, Աստիկ աշխարհի իմաստասերներ Լուկրեցիուս Կարոսի՝ «Իրերի բնությունը» փիլիսոփայական հայտնի պոեմի հեղինակի, Հերակլիտի, Թալեսի, Պլատոնի, Արիստոտելի, միջնադարի Շիրակացու, Ջորդանո Բրունոյի, Գալիլեյի ու Կոպերնիկոսի, Նոր ժամանակների փիլիսոփայական ուսմունքների, բանաստեղծական նվաճումների՝ Գյոթեի, Հայնեի, Բայրոնի, Պուշկինի, Թումանյանի ստեղծագործական փորձի յուրացմամբ հանդերձ՝ ուներ խոր կենսազգացողություն, ստեղծագործական հզոր երևակայություն, մտքի անկասելի թռիչքներ, բնական երևույթների անվրեպ ճանաչողություն, դրանց անձնավորման ու իմաստավորման բացառիկ ձիրք: Նրա ձիրքի այս առանձնահատկությունները խորապես ըմբռնում ու գնահատում էր ավագ գրչեղբայրը՝ Ավ. Իսահակյանը. «Շիրազը հոյակապ դեմք է մեր պոեզիայի Պառնասում, հորդաբուլս ու ձյնարիտ բանաստեղծ: Նրա ամեն մի բանաստեղծությունը մի անկրկնելի գյուտ է՝ զարմանալի պատկերներով: Բնությունը նրան օժտել է փիլիսոփայական խոր ինտուիցիայով: Համաշխարհային գրական գոհարներ եթե կազմվեին, ես մեծ սիրով տեղ կտայի «Էքսպրոմպտին», «Բիրլիականին» և այլ բանաստեղծությունների: «Բիրլիականը» փիլիսոփայական մեծ տաղանդի գործ է: Խորիմաստ «Բիրլիականի», ծաղկաբույր «Խօջեգարեի» և մյուս պոեմների կախարհ հեղինակը հետհոկտեմբերյան ամենամեծ հայ լիրիկն է: Հ. Շիրազը հայ ժողովրդի վշտի դարավոր մառախուղից ծագած աստղն է («Երբ չծագած աստղ է իր մառախուղում երազի»): «Բիրլիական» պոեմը գրված է վայրենի տաղանդով»²⁴:

Վարպետի այս բնորոշումը բնավ էլ չափազանցություն կամ պատահական ոգևորության արդյունք չէր: Բազմաթիվ հիացական գնահատականները, օտարազգի ստավորականների ու մեր ժողովրդի՝ իր հանդեպ պաշտամունքի հասնող սերը Հովհ. Շիրազը նվաճել էր համամարդկային հարուստ բովանդակությամբ առլեցուն ինքնատիպ ու բարձրարվեստ ստեղծագործությամբ, որը խորհրդային տասնամյակներում մեր ժողովրդի ստեղծած ամենաբարձր և անգնահատելի արժեքներից է: Եվ եթե նրանց գնահատումների մեջ չափազանցություն կա, ապա, կրկնենք Գ. Մահարուն, «իրենք մեղավոր չեն, Շիրազի ստեղծագործությունն է այդպիսին»:

Ընդ որում, առաջին կամ մայր «Բիրլիականի» մասին հասարակագետների, գրողների և այլ արվեստագետների՝ Ավ. Իսահակյանի, Մարիետա Շահինյանի, Սերո Խանգադյանի, Բոգդան Գեմբարսկու, Մորիս Փոցլսիշվիլու և այլոց բարձր արժևորումների կողքին ամկա էր նաև բնագետների անվերապահ հիացական գնահատությունը: «Բիրլիականն» Ավ. Իսահակյանը կարող էր որակել որպես «կոսմիկական տարերք ունեցող» և «փիլիսոփայական մեծ տաղանդի գործ»՝ գրված «վայրենի տաղանդով», պարսիկ քննադատ Ահմեդ Շամլունը՝ «հայ ժողովրդի հոգու ձիչը, մոունչը», պոեմի լեռ թարգմանիչ Բոգդան Գեմբարսկին էլ

23 Հ. Շիրազը նրանց անունները չտվեց, բայց սասց. «Ըստեղ նստած են. եթե անունները տամ, կնշանակի՝ զարնանային այս պայծառ օրը բաց պատուհաններից ազդավեր ու գիշանգղներ ներս մտնեն...»: Այս խոսքերը Շիրազն ասել է ՀԳՄ 7-րդ համագումարում: Գոյություն ունի ձայնագրությունը:

24 Հովհ. Շիրազի մասին կարծիքները տես «Քնար Հայաստանի», գիրք երրորդ, «Հայաստան» հրատ., էջ 398-407:

հավաստեր, թե «Միայն մեծ վշտից հառնած ազգի զավակը կարող էր երկնել «Բիբլիականը», կամ ֆրանսիացի քննադատ Պիեռ Պարաֆը, նրանցից բոլորովին անկախ, բարձրաձայնել, թե «Շիրազի «Բիբլիական» պոեմի մեջ վերածնվում, շքեղանում է հայ ժողովրդի հանձարը իր ամբողջական տիեզերական գործւթյամբ: Հոգին շնչավորվում է: Նշմարվում և հայտնվում է երգի ընթացքի ոսկե թելը, որ «Բիբլիական» պոեմը միացնում է Վիկտոր Հյուգոյի «Հնդկական մոգեր» պոեմին և Պյութագորի «Լուկրեցիոսին», մեծ խորհրդագետներին: Չնոռանամ նշել այդ պոեմի հունական փիլիսոփայական արժեքը»²⁵: Այսպես մտածել է ֆրանսիացին:

Բայց ահա պատերազմից հաղթանակով նոր վերադարձած, դաժանություններ ու փորձություններ հաղթահարած զինվոր Սերո Խանգադյանը վկայել է, թե ինչ ներգործություն է ունեցել Հովի. Շիրազի «Բիբլիականը» իր և սերնդակիցների վրա. ««Բիբլիականը» դարագլուխ կազմող գործ է: Համաշխարհային պոեզիայի մեջ, իմ համոզմամբ, այդ գործը շատ քիչ համարժեքներ ունի: Հայրենական պատերազմից վերադառնալով՝ հանդիպեցի բանաստեղծական փոթորկի. հանձարեղի հանձարեղ գործը տպագրվել էր 1944 թվականին: Եվ երբ կարդացի զինվորիս կրակված, նաև հաղթանակած սրտով, վերադարձա դեպի լիարժեք կյանքը՝ անհուն բերկրանք զգալով: Դա հանդիպում էր նոր Նարեկացու, նոր Արմավյանի, նոր Դանթեի, նոր Լերմոնտովի, նոր Գյոթեի ոգու հետ: «Բիբլիականը» աշխարհաստեղծան նոր Աստվածաշունչ է: Ցնցված էի: Շիրազը աներևույթ աստծուն երևույթ է դարձրել, իջեցրել երկնքի խորթ հեռուներից... Այստեղ պիտանին ու հարկավորը մարդն է, մարդու հաղթանակը «անհայտ ոգու» նկատմամբ»²⁶:

Մոտիկ կամ հեռավոր անցյալի գեղարվեստականացումը և ներկայի շահերին ծառայեցնելը, պատմության միջոցով արդիական գեղարվեստական ու գաղափարական խնդիրներ արծարծելը Հովի. Շիրազը համարում էր իր ստեղծագործության գլխավոր նպատակադրումներից մեկը: Պատմությանը բանաստեղծն անդրադառնում էր ըստ անհրաժեշտության: Հարկավոր էր նոր սերունդներին դաստիարակել անցյալի փառքերի, մեր հերոս նախնիների սխրանքների օրինակով՝ նա կերտեց Տիգրան Մեծ հզոր արքայի կոթողային կերպարը («Տիգրան Մեծի վիշտը և հավերժությունը»), պետք էր խորանալ Բագրատունիների թագավորության և նրա Անի մայրաքաղաքի կործանման պատճառների մեջ՝ սերունդներին անցյալից դասեր քաղելու և մեր ցավալի կորուստների մեջ սեփական մեղքի բաժինը մատնացույց անելու համար՝ նա գրեց «Անի» և «Թոնդրակեցիները» պատմափիլիսոփայական պոեմները, իսկ խորհրդային իշխանությունների կողմից հատուկ խնամքով ժողովրդից թաքցվող հայոց ահավոր ողբերգությունը՝ Մեծ եղեռնը, ամբողջ լայնքով ու խորքով բացահայտելու և ցեղասպանին համաշխարհային դատաստանի կանչելու նպատակով էլ գրեց «Հայոց դանթեականը» պոեմ - դատաստանամատյանը: Ժանրային ոչ մի կաղապարի մեջ չստեղծվող այդ երկը հագեցած է բոլոր արդիական հարցադրումներով, որ ծագում են և ծագելու են հայ-թուրքական հարաբերությունների անցյալ, ներկա և գալիք փուլերում:

Շիրազի մահից հինգ տարի և գրվելուց 47 տարի հետո հետո միայն՝ 1989 թ., այն լույս տեսավ շուրջ 400 «անթույլատրելի» տողերի կրճատումով, որոնք անպայման պետք է վերականգնվեն նոր հրատարակության մեջ, իսկ այսպես՝ խաթարված են պոեմի ոչ միայն դիպաշարն ու կառույցը, Դանթեի «Դժոխքի» հետ արտաքին նմանությունների խորհուրդը, այլև գաղափարական ու գեղագիտական ուղղվածությունը, աշխարհի մեծ մարդասերների և հայ մեծերի ոգելիմբի՝ Անդրանիկի առաջնորդությամբ հենց Նախիջևանով Արևմտյան Հայաստանի եղեռնադժոխք մտնելու նպատակը, բացակայում են Նախիջևանի, Արցախի և Ադրբեյ-

25 Նույն տեղում:

26 Հ. Հովսեփյանի «Շիրազը երկնային պարզ և, նրա գլխին է մեր պոեզիայի թագը» գրույցը Սերո Խանգադյանի հետ, տես Հ. Հովսեփյան, Զրույցներ, Եր., 1992, էջ 91:

ջանի ու Թուրքիայի շուրջ հեղինակային խորհրդածությունները: Սակայն առկա է դիպաշարային հիմնական կառույցը. Հումերոսի, Դանթեի, Շեքսպիրի, Գյոթեի, Հայնեի, Մաշտոցի, Խորենացու, Նարեկացու, Հովհ. Այվազովսկու, Անդրանիկի ուրվականներից կազմված ոգեխումբը շրջում է Հայոց եղեռնի դժոխային պարունակներով, անմահների ոգիներն իրենց վերաբերմունքն են արտահայտում իրական դժոխքի հանդեպ, «Դժոխքի» վարպետ Դանթեն իր դափնին նետում է Արաքսի դիատար արնաջրերի մեջ և նզովում հայոց դժոխքի հեղինակներին, իր ազգի և աշխարհի լույթունը.

ՀԱՎԵԼՎԱԾ

**«Տեսնելն էլ մեղք է, ուր մնաց գործել...
Ես նզովում եմ նրանց, որ երեկ
Գործով են մրցել գրած «Դժոխքիս»՝
Մահաճամբարներ երկնելով այսքան...
Ես նզովում եմ լույթունն ազգիս...»,-
Ասաց ու գնաց իր խղճին հլու
Դանթեն՝ իր աչքի մեղքը քավելու²⁷:**

Գեղարվեստական պատկերով են արտահայտված խորհելու տեղիք տվող քազմաթիվ բանաձևումներ, որ արդիական են գրվելու օրվա պես, ինչպես, օրինակ՝

**Թուրքն հայի արնից ձեռքերը հանում,
Աստծու արցունքի մեջ է լվանում,
Սրբում սրբիչով ազգերի տված,
Ցնծում լույթամբ նրանց անաստված...²⁸:**

**Հայոց եղեռնն անդազաղ ու անթաղ է հավիտյան.
Տիեզերքն է դազաղը եղեռնամեռ հայության:
Քրիստոնյա աշխարհն էլ հեթանոսվել, մահմեդվել,
Հազար անգամ է դավել՝ ոչ մի մեղքը չի քավել...²⁹:**

«Հայոց դանթեականը» ողբամունչ դատաստանամատյանը ծայրեծայր լիքն է այսպիսի ընդհանրացում-եզրահանգումներով³⁰:

7. Ազգային միասնության գաղափարը «Թոնդրակեցիները» պատմափիլիսոփայական պոեմում

Արդեն տպագրության ընթացքի մեջ ենք դրել շիրագյան ևս մի գլուխ-գործոց՝ «Թոնդրակեցիները» պատմափիլիսոփայական պոեմը, որի մասին, հանդգնում ենք ասել՝ հնչում է գրականագիտական առաջին խոսքը: Արդարամիտ բանաստեղծը, հակառակ խորհրդային գաղափարախոսական կադապարներով այդ ազգակործան աղանդի անիմաստ փառաբանումներին, մատենագրական աղբյուրներից, հատկապես Արիստակես Լաստիվերցու և Գրիգոր Մագիստրոսի աշխատություններից անձամբ քաղած տեղեկությունների հիման վրա իր արվեստի հզոր ուժով ցույց է տվել պատմական ճշմարտությունը, բացահայտել է

27 Հովհ. Շիրազ, Հայոց Դանթեականը, «Նաիրի» հրատ., Եր., 1991, էջ 271-273:

28 Նույն տեղում, էջ 65:

29 Նույն տեղում, էջ 287:

30 Այս և պատմական թեմաներով մյուս պոեմների առավել հանգամանակից քննությունը տես Ս. Մուրադյան, Հովհաննես Շիրազ, Եր., 2012, գրքի «Պատմական հիշողության ճիչը» բաժնում - Ս. Մ.:

Զ (ԺԲ) ԳԱՐԻԻ, ԹԻՎ 3 (47) ԽՈՒԽԱ-ՄԵԱԳՐԱՄԲԵՐ, 2014

ՎԷՄ ԽԱՆՄԱՆԱԿԱՅԿԱԿԱՆ ԽԱՆՔԵՆ

այդ շարժման էությունն ու թոնդրակեցիների իրական դեմքը: Վերջիններիս ապագգային ու հակաքրիստոնեական գործունեությունը կորստաբեր եղավ հայոց պետականության համար և հայ եկեղեցուն ու հայ ժողովրդին պատճառեց անչափելի նյութական ու բարոյական վնասներ:

Խորհրդային ժամանակներում Հովհ. Շիրազի այս ստեղծագործությունը մերժելուց յոթ տարի անց՝ 1961 թվականին, հնարավոր էր և տպագրվեց Վահագն Դավթյանի «Թոնդրակեցիներ» պոեմը: Ամենևին էլ այն թերագնահատելու, առավել ևս նսեմացնելու նպատակ չունենք, բայց և չենք կարող չասել, որ հայոց պատմական անցյալը գեղարվեստականացնելու ներքին բուռն ձգտում ունեցող տաղանդաշատ բանաստեղծի այս ստեղծագործությունը իդեալականացված Մմբատ Զարեհավանցու և Հայոց երկիրը քանդող ու ավերակող, փլված եկեղեցիների տեղը վեցկե եզներով վարող թոնդրակացյալ ապագգային խառնամբոխի անսասնձ մի գովերգություն է: Մեր պատմության այդ ժամանակահատվածի ու մանավանդ՝ թոնդրակյան շարժման էության մասին, թեկուզև գնահատելի արժանիքներով, ստեղծվել էր պաշտոնական տեսակետը պաշտպանող գեղարվեստական երկ, որի համար դժվար է խստորեն մեղադրել հեղինակին: Իսկ Հովհ. Շիրազի՝ հայոց ոգու և էության խորքային բացահայտումներով ստեղծագործությունները չէին կարող տպագրվել:

Հովհ. Շիրազը թոնդրակեցիների համակիրը չէր և իր պոեմն էլ գրել է ոչ թե փառաբանելու, այլ նրանց ապագգային գործունեությունը գեղարվեստորեն ցուցադրելու նպատակով: Ամբողջ պոեմի ընթացքում նա պատկերավոր խոսքով նրանց մասին ասել է այն, ինչ մտածում էր, և դա ընթերցողի համար միանգամայն ըմբռնելի է ու հասկանալի: Խորհրդային դարաշրջանում հոսանքի ուղղությամբ ընթացող բանաստեղծը որևէ խոչընդոտ չունեց: Սակայն ազգապահպան մի կարևոր գաղափար, հայոց լեզվի հավերժության կամ Հայ դատի ու պահանջատիրության ուղղությամբ մի կարևոր միտք գլավլիտի մաղով անցկացնելու համար Հովհ. Շիրազը հարկադրված էր տեղ-տեղ դիմելու «դիվանագիտական» որոշ չարդարացվող շեղումների և ցուցադրական համակրանք արտահայտելու ոչ սիրելի թոնդրակեցիների հանդեպ՝ հուսալով գոնե այդպիսով ծանապարհ բացել պոեմի տպագրության համար: Բայց նա, ի տարբերություն և հակառակ պաշտոնական պատմագիտությանը, իր պատմափիլիսոփայական պոեմում թոնդրակեցիների էության և նրանց շարժման մասին անթաքույց ասել էր ողջ ճշմարտությունը:

Բագրատունյաց Հայաստանի տարբեր գավառներում, գյուղերում ու ավաններում անբուժելի քաղցկեղի արագությամբ տարածված թոնդրակյան շարժումը խարխլեց հայ եկեղեցուն և պետականության հիմքերը, պառակտեց մեր ազգային միասնականությունը՝ թշնամական շրջափական մեջ հայտնված հայությանը կանգնեցնելով ակուծելի խնդիրների առջև: Թոնդրակեցիներն ու թոնդրակուռիները, ազգի ոգին ու ողնաշարը կոտրելով, պետությունից և եկեղեցուց ժողովրդին հիապոփեցնելով ու հուսահատեցնելով, երկրի հիմքը՝ ընտանիքը քանդելով, կանանց համայնացման անպատկառ քարոզչությամբ շարժման կենտրոն Թոնդրակում ու ողջ Ապահունիքում, Հարքում, Սյունիքում, Մանանաղի և Դարանաղի գավառներում, Վասպուրականում, Մոկքում, Այրարատում, Շիրակում և այլուր բարոյական ու մարմնական ախտերի տարածումով, Քրիստոսին անառակ կնոջ ապօրինի վիժվածք համարելով, սրբազան մյուռնը թափելով, քահանաների ու մյուս հոգևորականների մորուքները բռնի խուզելով, կարգալույծ անելով կամ սպանելով, եկեղեցիներն ու տաճարները քանդելով, հոգևոր ծիսակարգերն արգելելով՝ այնքան խարխլեցին քրիստոնեական հավատքն ու թուլացրին երկիրը, որ 11-րդ դարի 40-60-ական թթ. արդեն անկարելի եղավ հարձակումներից պաշտպանել թագավորությունն ու նրա Անի մայրաքաղաքը: Ինչպես վերը տեսանք, պատճառը միայն սոցիալական չէր. այդ ներքին հուժկու շարժումը, ավատատերերից ու եկեղեցուց հասարակական լայն խավերի համընդհանուր դժգոհության արտահայտություն

լինելով, վերածվել էր ազգակործան ահռելի սպառնալիքի, որի դեմ պետությունն անգամ անգոր էր պայքարելու: Գրեթե բոլոր բնակավայրերում ստեղծված թոնդրակյան աղանդավորական համայնքները, Հովհ. Շիրազը կասեր՝ թոնդրաորջերը, միջնադարում ավելի ավերիչ ու կործանարար էին, քան տարերային ցանկացած աղետ, թշնամական որևէ հարձակում Հայաստանի վրա:

Ստեղծվել էր բարդ ու իրոք ճգնաժամային իրավիճակ. Բագրատունիների պետությունն ու հայ եկեղեցին ինչպես ապահովեին երկրի ու ժողովրդի անվտանգությունը, ո՞ւմ դեմ և ինչպես կռվեին. Անին ու հայոց պետականությանը խժոճելու եկած սելջուկյան հրոսակներին, արտաքուստ խաչեղբայր ու «բարեկամ» ձևացող նենգ բյուզանդացիներին, թե՛ ներքին աղետի՝ թոնդրակյան աղանդավորական շարժման:

Իրավիճակի մասին, ինչպես հանդվում ենք, տազնապալի են հայ պատմիչների հաղորդած տեղեկությունները: Անշուշտ, Գր. Մագիստրոսի «Թղթերում», Ա. Լաստիվերցու և ուրիշների «Պատմություն»-ներում թոնդրակյան շարժման նկատմամբ սուբյեկտիվ վերաբերմունքի դրսևորումներ կան, բայց նրանք բոլորն էլ ունեցել են պետականամետ մտածողություն, պետությունը համարել են եկեղեցու պաշտպան և թոնդրակեցիների՝ հայոց պետականությունն ու եկեղեցին թուլացնող ու դեպի կործանում տանող գործունեությունը ներկայացրել են արդարամիտ: Բայց ահա, ամենուր սոցիալական բողոքի դրսևորում, դասակարգային պայքար, եկեղեցու և հավատի դեմ ընդվզում փնտրող խորհրդային պատմագրությունը, ենթարկվելով աթեիստական գաղափարախոսությանն ու ժամանակի քաղաքական պարտադրանքներին, փորձում էր հանձին թոնդրակեցիների տեսնել ազատախոհ հեղափոխականների, աստվածընդդեմ ու առաջադեմ գործիչների, իսկ նրանց ուսմունքի կամ վարդապետության մեջ՝ ոչ ավել, ոչ պակաս՝ սոցիալիզմի սաղմեր: Ուստի պավլիկյաններին, թոնդրակեցիներին, ինչպես նաև Հայաստանի առաջին հանրապետությունը քայքայման հասցրած Մայիսյան խռովության տխրահռչակ «հերոսներին» փառաբանում էին:

Թոնդրակյան շարժման հետևանքով սպառնալիորեն ավելացել էին նյութական, մարդկային ու բարոյական կորուստները. թե՛ վանքերն էին ավերվում, թե՛ մարդիկ էին բարոյապես կործանվում, և արտաքին թշնամիների դեմ պատերազմական ճակատներից բացի, բացվում էր նաև ներքին ճակատ, որը հոգեբանական առումով առավել դժվար հաղթահարելի էր:

Այս իրողության սթափ ու ողջամիտ, կարելի է ասել՝ լավագույն արտացոլումն է Հովհ. Շիրազի «Թոնդրակեցիները» պոեմը, որ, գեղարվեստական լինելով, ավելի ճշգրիտ է, քան խորհրդային պատմագիտության պաշտոնական տեսակետը: Ահա թե ինչու շիրազյան մյուս պոեմների նման «Թոնդրակեցիները» ևս չափտի տպագրվեց խորհրդային ժամանակներում:

Ինչպես պատմական թեմաներով գրված մյուս երկերը, Հովհ. Շիրազի այս պոեմը ևս ունի պատմագիտական ամուր հիմք: Չբավարարվելով պատմաբանների կարծիքներով և ներքին բանավեճ ունենալով նրանց հետ՝ Շիրազն անձամբ է գրաբարով ուսումնասիրել սկզբնաղբյուրները, նույնիսկ երկի հերոսներից մեկի խոսքը բառացի վերցրել է Լաստիվերցու «Պատմություն»-ից՝ գրաբար տեքստը վերածելով չափածոյի:

Ժամանակի մեր մատենագիրներն իրենց երկերում արձանագրել են այն, ինչ իրենց թվացել է ամենից կարևոր և ճշմարիտ: Հովհ. Շիրազը, սակայն, սերունդների համար պատմությունից վերցրել է կրակը՝ մոխիրը թողնելով անցյալին: Նա Ա. Լաստիվերցուց, Գր. Մագիստրոսից և ուրիշներից, ինչպես և Լեոյից, Ե. Տեր-Մինասյանից, Ա. Հովհաննիսյանից քաղել է իր պոեմի նյութը՝ դարաշրջանի սոցիալ-քաղաքական պայմանների մանրամասները, էպիկական գործողություններն իրականացնող՝ պատմիչների վկայած իրական անձնավորություններին, որոնց կերպավորել է որպես պատկերվող դարաշրջանում ու հանգամանքներում գործող

ՀԱՎԵԼՎԱԾ

2 (ՃԲ) ԳՄԱՐԻ, ԹԻՎ 3 (47) ԽՈՒԽ-ՍԵՊՏԵՄԲԵՐ, 2014

ՎԷՆ ԽԱՄԱՆԱԿՎԱԿԱՆ ԽԱՆՈՒԿ

կենդանի ու հավաստի մարդկային բնավորություններ՝ իրենց որոշակի վարքագծով, խոհերի ու զգացմունքների աշխարհով:

Այս պոեմի գաղափարական գլխավոր արժանիքն այն է, որ Հովհ. Շիրազը, ինչպես գրականագետ Մ. Բախտինն է արտահայտվել Ֆրանսուա Ռաբլեի «Գարգանտյուա և Պանտագրյուել»-ի առիթով, համարձակորեն փշրել է երևույթի վերաբերյալ պետական-պաշտոնական կարծիքը և գեղարվեստի միջոցներով բացահայտել պատմական ճշմարտությունը:

Պավլիկյաններին արաբներն էին հովանավորում, թոնդրակեցիներին՝ բյուզանդացիներն ու սելջուկները, նորօրյա աղանդավորներն էլ ունեն իրենց օտարերկրյա սնուցիչները: Պարզվում է՝ աղանդավորները, ըստ Լաստիվերցու և մյուսների, միայն սոցիալապես աղքատ դասակարգերից կամ խավերից չեն սերել, այլ նաև միջին խավերից, ունևորներ, իշխաններ, անգամ բարձրաստիճան հոգևորականներ, որոնց համար, ըստ թոնդրակյան քարոզչության, նյութականից, ազգից, հավատքից ու պետականությունից «ավելի բարձր գաղափարներ ու արժեքներ» են եղել նախընտրելի:

Երբ պատմագետն է փաստերի լեզվով խոսում թոնդրակեցիների մասին՝ բերելով ժամանակակիցների վկայությունները, մի բան է, բայց մի այլ բան է, երբ գրողն է նույն վկայություններն ու տեղեկություններն օգտագործելով՝ ստեղծում պատմական միջավայրի, դարաշրջանի ու թոնդրակյան շարժման պատկերը: Բարձրագույն ատյանում միմյանց դեմ բանավիճելով՝ հերքող կամ հաստատող կողմերի՝ թագավորի, կաթողիկոսի, սպարապետի, ինչպես և յոթ շղթայվածների՝ Սմբատ Զարեհավանցու, Կունծիկ Աբեղայի, Վրվեռ և Թորակ թոնդրակեցիների, Հրանուշ, Ախսի և Կամարա թոնդրակուհիների կենդանի կերպարները կերտված են բանաստեղծական բացառիկ խոսքով, նրանց երկխոսությունների բնականությամբ ու գեղարվեստական համոզչությամբ: Դաժան, անզիջում է այդ երկխոսություն – բանակռիվը, որ վերածվում է իմացության բուռն ու անողորմ քննադատի: Եվ լարվածությունը գնալով սաստկանում է, քանի որ համառոտներից ոչ ոք չի պատրաստվում ընդունելու կամ խոստովանելու իր պարտությունն ու դիմացինի հաղթանակը. դա կողմերից մեկի համար կնշանակեր հայությանը զրկել պետական և հոգևոր իշխանությունից ու թշնամուն մատնելով՝ կործանել Հայաստանը, մյուսի համար՝ դավաճանել իրենց հրահրած ու երկրով մեկ ծավալված աղանդավորական շարժմանը, լքել պայքարի դաշտը, ծունկի իջնել թագավորի և հոգևոր պետերի առջև և ընդունել նրանց գերիշխանությունը:

Շղթայված թոնդրակեցիները, անգամ իրեն նոր Հիսուս հռչակած Սմբատ Զարեհավանցին, սարսափում են միայն մահվան սպառնալիքից և միայն այդ դեպքերում են կյանք աղերսում զայրագնած թագավորից ու սպարապետից:

Հովհ. Շիրազի «Թոնդրակեցիները» իրոք պատմափիլիսոփայական պոեմ է: Սկսվում է այն դրամատիկ պահի պատկերումով, երբ պարտադրում են թոնդրակյան յոթ պարագլուխներին՝ ծունկի գալ բանադրող բարձրագույն ատյանի՝ Հովհաննես Սմբատ արքայի, Վահրամ Պահլավունի սպարապետի, Հուսիկ Աղավաունի կաթողիկոսի, Գր. Սագխատրոս Փիլիսոփոսի, ատենադպիր Լաստիվերցու առջև, հրապարակավ ներումն հայցել և թողություն ստանալ նրանցից: Այլապես նրանց սպառնում էր բանադրում և ձակատներին շիկացած երկաթով աղվեսադրոշմի խարանում: Բայց անդրդվելի են նրանք իրենց շղթաների մեջ անգամ, համառ են իրենց հանդգնումներում և իրենց դեմ են շարժում ոչ միայն պետական և հոգևոր առաջնորդների, այլև ողջ ժողովրդի զայրույթն ու ցասումը: Զարեհավանցին, Վրվեռ և Թորակ թոնդրակեցիները ձգնում են արդարանալ՝ մեջտեղ բերելով սոցիալական ու դավանաբանական խնդիրներ և գործի դնելով իրենց ճարտասանական բոլոր հմտությունները: Իհարկե, հնչում են որոշ ճշմարտություններ ռամիկների հողազրկության, իշխանների դաժանության և հոգևորականների գանազան շահատակությունների մասին: Թոնդրակեցիները ջանում են հիմնավորել

իրենց անաստվածությունն ու եկեղեցու դեմ ատելությունը, մերժում են Հիսուսի աստվածային լինելը, կրոնը, եկեղեցին ու նրա ծեսերը՝ մկրտության ու պսակի խորհուրդը, անաստվածության հետ միասին քարոզում են կանանց համայնացում ու ընտանեկան կապերի խզում, նաև այլ ծայրահեղություններ: Սակայն նրանք թաքցնում էին հայրենիքի դեմ գործած չարիքները և ազգային միասնությունը պառակտող ոճիրները: Հենց այս բանավեճի միջոցով է խիզախ բանաստեղծն արտահայտում իր վերաբերմունքը թոնդրակեցիների հակազգային ու հակապետական գործունեության կործանարար ու ողբերգական հետևանքների և ձեռքից գնացող երկիրը, պետականությունը փրկելու ելքեր որոնող ողջամիտ աշխարհիկ ու հոգևոր գործիչների նկատմամբ: Արքան մտահոգ է պետականության հիմքերն ամրապնդելու և բոլոր կողմերից շրջափակման մեջ հայտնված երկիրը փրկելու համար, սպարապետը տագնապում է, որ անսանձ վայելքի հորձանուտը նետված թոնդրակացած կանայք, ինչպես և կուսանոցներում եղածները չեն մայրանում, ազգը անլանում է, հայ զինվոր չի ծնվում ու հայ զորք չի ստեղծվում հայրենիքը պաշտպանելու համար:

**Կույս գալիս են, կույս էլ գնում.
Կույսը պիղծ է, երբ չի ծնում,
Այն էլ կույսը հայոց ազգի,
Որ կարոտ է կովող բազկի³¹:**

Կաթողիկոսը ողբում է հավատի սյուների խարխլման, եկեղեցիների քանդման, կանանց համայնացման և զանազան սեռական ախտերով ժողովրդին համաճարակելու վտանգից: Բախումն ավելի է սրվում, ժողովրդի գայրույթն ավելի է սաստկանում, երբ դատաստանի են բերում նաև շղթայակապ թոնդրակուռիներին. մեկը մյուսին գերազանցող անլացած գեղեցկուհի պերճադիճների, ովքեր իրենց հայտնվելով շարժում են թե՛ արքայի, թե՛ կաթողիկոսի, թե՛ սպարապետի, թե՛ ժողովրդի անթաքույց հիացմունքը:

«Նոր Հիսուսի»՝ մի աչքը կապույտ, մյուսը սև Ջարեհավանցու հանդեպ շիրազյան վերաբերմունքը նաև ամբողջ շարժման բնութագրին է: Սակայն հեղինակն այդ համազգային ողբերգության գնահատականը հնչում է նաև թագավորի, կաթողիկոսի ու սպարապետի չափազանց սուր քաղաքական ելույթներում, որոնցում առավել հստակ է ինչպես քաղաքական վտանգավոր իրադրության, այնպես էլ թոնդրակյանների հայրենադավ գործունեության պատկերը:

«Թոնդրակեցիներում» այդպիսի բանավեճեր ծավալվում են Հովհաննես Սմբատ արքայի, Հուսիկ Աղավնունի կաթողիկոսի, Վահրամ Պահլավունի սպարապետի, Գր. Մագիստրոսի և գաղափարական հակադիր կողմի՝ բանադրության համար առյուծ կանչված Սմբատ Ջարեհավանցու, Վրվեռ և Թորակ Թոնդրակեցիների, Կամարա, Ալսնի, Հրանուշ թոնդրակուռիների և մյուսների միջև: Բանավեճերից յուրաքանչյուրն իր մտքի սրությունն ու էությունն է դրսևորում երբեմն ուղղակի անմիջականությամբ, երբեմն սարկազմի հասնող հեզանքով ու խայթող ծաղրով, իսկ թոնդրակյան կողմը՝ երբեմն գույթ շարժելով շղթաներից ազատվելու համար կեղծ համաձայնության ու դարձի խորամանկ խոստումներով: Հեղինակային վերաբերմունքը, բարձր արվեստի շնորհիվ, արտաքուստ մնում է գրեթե աննկատ, քանի որ հեղինակն ինքը առկա է բանավեճող երկու կողմերում էլ՝ ջանալով համոզություն հաղորդել նրանց խոսքին՝ երկու կողմերին էլ տալով լիարժեք արտահայտվելու հնարավորություն: Թերևս այս պատճառով է, որ հաճախ անմիջապես չի երևում որի կողմնակիցն է ինքը: Բոլոր դեպքերում մեր առջև կանգնում են իրական-պատմական անձնավորություններ՝ իրենց մտածողության ու հոգեբանության,

31 Հատված ներկայումս տպագրության պրոցեսում գտնվող «Թոնդրակեցիները» պոեմից՝ Ս.Ս.:

նան մարդկային բնավորության անմիջական դրսևորումներով: Այդ ամենի մեջ, սակայն, հստակ ուրվագծվում է հեղինակի՝ որպես հայոց պետականության ամբաստանաբան, կորցրած հողատարածքները վերադարձնելու, ազգ-պետություն-եկեղեցի միասնության, հայրենի սրբություններին հավատարիմ հայ մարդու ազգային ոգու, հոգեմտավոր ու բարոյական արժեքների՝ նվիրյալ պահապանի լուսավոր կերպարը:

Շղթայված թոնդրակեցիների բանադրման վճիռը՝ նրանց կախելը կամ ճակատներին աղվեսադրոշմ խարանելը, իրական է և պատմական: Մանավանդ Անիի Մայր տաճարում Կամարայի մերկանալուց հետո այդ վճիռն արդեն կայացած էր: Սակայն բնական մի երևույթ՝ Արևի խավարումը, որ նույնպես վկայված է պատմագրության մեջ, ստեղծում է այնպիսի խառնաշփոթ, որից օգտվելով՝ փախչում են դատապարտյալները: Բայց նրանք պատժվում են արաբների՝ Աբուլ-Բադրի ձեռքով, և յոթն էլ դառնում են մի բուռ գերեզման:

Ավելի քան կես դար առաջ գրված «Թոնդրակեցիները» պոեմում ոչինչ չի հնացել, և այսօր էլ այն արդիական սուր հնչեղություն ունի: Այնտեղ ձգգրիտ են ներկայացված Հայաստանի պատմական աշխարհագրությունը, բոլոր այն տեղավայրերը, ուր ծավալվել է թոնդրակյան շարժումը, և կատարվել են էպիկական գործողությունները: Նրա էջերում պատմականն ու գեղարվեստականը հանդես են գալիս միասնաբար: Իսկ շիրազյան չափածո պատումի լեզուն իր բառապաշարի հարստությամբ ու ճոխությամբ, պատմական դարաշրջանի և միջավայրի գունագեղ պատկերավորման առումով մրցակից չունի:

Հայ դասական գրականության դեռևս անհայտ այս գլուխգործոցի՝ Հովհ. Շիրազի «Թոնդրակեցիները» պատմափիլիսոփայական ծավալուն պոեմի տպագրությունը լավագույն նվերն է ընթերցողին մեծ բանաստեղծի ծննդյան 100-ամյա հոբելյանի առթիվ:

Այսքանով հանդերձ՝ Հովհաննես Շիրազի երկերի լիակատար ակադեմիական ժողովածու դեռևս չունենք: Ոչ միայն նրա ձեռագիր հսկայական ժառանգությունը հրատարակված չէ (դեռևս անտիպ են մի քանի «մանր» պոեմներ, բազմաթիվ բանաստեղծություններ և, ժառանգների ասելով՝ շուրջ տասը հազար նամակներ), այլև խորհրդային ժամանակներում տպագրվածները թերի են անհարկի խմբագրումների և գլավլիստային կրճատումների պատճառով: Մինչդեռ հայության նոր սերունդները հայ բոլոր դասականների հետ միասին պիտի անմիջական հաղորդակցություն ունենան Հովհ. Շիրազի գրական ամբողջ ժառանգության հետ, որովհետև նրա էջերում գեղարվեստի ուժով ներկայի դիրքերից վերակերտված են Հայոց պատմական անցյալի կարևորագույն դրվագները, հայության ներկան պատկերված է գալիքի տեսլականով և այն իրականացնող կանխատեսումներով («Տարտարոս է Տարոնը դեռ, ո՞ր ես, Ավարայր Ղարաբաղ³²» և այլն):

Հովհաննես Շիրազը կյանքի նորոգման ու թարմացման, սիրո և գեղեցկության, Հայոց մեծ եղեռնի ու միաժամանակ՝ ազգային անկատար երազանքները մասին իր անկրկնելի բանաստեղծություններով ու պոեմներով և մահվան դեմ հաղթանակն ազդարարող փիլիսոփայական երկերով հյուսել է հայկական համամարդկայնության ամենավառ ու բովանդակալից էջերից մեկը, որը լուսավորելու է սերունդների ճանապարհը:

2014 թ., հուլիս
Սանկտ Պետերբուրգ

Սամվել Պ. Մուրադյան – գիտական հետաքրքրություններն ընդգրկում են հայ գրականության պատմության, հայ երգիծաբա-

32 Բանաստեղծությունն ամբողջությամբ տե՛ս մեր «Հովհաննես Շիրազ» մենագրության 253–254 էջերում:

նության, քնարերգության և գրական մտքի պատմության հիմնահարցերը:

ՀԱՎԵԼԿԱՅ

Summary

THE PRIEST OF PATRIOTISM

On the occasion of the 100th anniversary of Hovhannes Shiraz

Samvel P. Muradyan

The article is devoted to the 100th anniversary of one of Armenian classic poets – Hovh. Shiraz and briefly represents his literary path and merits. This prolific lyricist of exceptionally imaginative thinking and deep Lebensphilosophie (philosophy of life) is presented in the context of literary life of the 1930–1980's. The work of Hovh. Shiraz is considered as one of the greatest manifestations of Armenian poetic mind. With the help of his poems and other compositions praising and glorifying such values as love, beauty, life, mother and homeland, as well as condemning the Genocide, Hovh. Shiraz wove one of the most vivid and meaningful pages common to all Armenians, which is going to illuminate the path of generations.

Резюме

ЖРЕЦ ПАТРИОТИЗМА

К 100–летию Ованеса Ширази

Самвел П. Мурадян

Статья посвящена 100–летию одного из армянских поэтов–классиков – Ов. Ширази и кратко представляет его литературный путь и заслуги. Поэт исключительно образного мышления и с глубокой жизненной философией представлен в контексте литературной жизни 1930–1980 годов. Поэзия Ов. Ширази считается одним из величайших проявлений армянской литературы. С помощью своих стихов и других композиций, восхваляющих и прославляющих такие ценности, как любовь, красота, жизнь, мать и родину, а также осуждая Геноцид армян, Ов. Шираз осветил путь поколений всех армян мира.

ՀԱՎԵԼԿԱՅ 2 (ՃԲ) ԳՐԱՐԻ, ԹԻՎ 3 (47) ԽՈՒՐԿ-ՆԵՎԵՐԵՆԵՐ, 2014 ՎԷՎ ԽԱՆԿԱԿԱՎԱԿԱՆ ԽԱՐՈՒՆ